

ՀԱԽՑ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

Գրու. ԱՇԽԱՐԴՅԵՎ. ՔԱՂԱԿԱՆԹԱՐ

ՀԻՆ ՎԱՂԱՐՇԱՊՈՏԻ  
ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Проф. АШХАРБЕК КАЛАНТАР

РАСКОПКИ  
ДРЕВНЕГО ВАГАРШАПАТА

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԱԼԻԳՈՆՅԱՆ ՅԱՊՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎԱՆ, 1985 թ.

Проф. АШХАРБЕК КАЛАНТАР

РАСКОПКИ  
ДРЕВНЕГО ВАГАРШАПАТА

(КАРТЫ, ПЛАНЫ, ФОТО СНИМКИ)

Приложения:

1. Акад. С. А. Жебелев—Греческая надгробная надпись из Вагаршапата.
2. С. Г. Тамамшян—„Ископаемая“ пшеница из раскопок кургана близ Вагаршапата.

ИЗДАНИЕ „ФОНДА МЕЛКОНЯН“.

Prof. ASKHARBEK KALANTAR

LES FOUILLES  
DANS L' ANC. VALARCHAPAT

Supplément:

1. Académicien S. Zebelev.—Epitaphe grecque trouvée à Valarchapat.
2. S. Tamamchian.—Blé fossile trouvé dans les fouilles du Kourgane près de Valarchapat.

Edition du „Fond Melkonian“

Ереван, 1935.

Պրոֆ. ԱՇԽԱԲԱԴԻՆԻ ՔԱՂԱԿԱՆԹԱՐ

902.6 (ԿԴ. 925)

Բ-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ  
ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

(ՔԱՐՏԱՐԱԿԱՆ, ՊԱՐԱԿԱՆ, ՂԱՎԱՐԱԿ)

Հ Ա Ձ Ե Լ Վ Ա Ճ

1. Ակադեմիկ Ա. Ա. Ժ Ե Բ Է Լ Յ Ո Ւ — Համարեն դամբանական առանձագրություն գտնված Վաղարշապատում.
2. Ա. Բ Ա Մ Ա Մ Ե Յ Ո Ւ — «Բրածո» ցորեն կուրզոնի պեղումներից Վաղարշապատի շրջանում.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՆԵՐՈՂԱԿԱՆ ԳՈՆԴԻ

ՑՆԻ ԲՆԱԿԱՆ 1935 թ.

Վեռնըստի առաքուն  
Դշովիս 525  
Պարվեր 1532  
Տիրամ 1000



Ն. Ա. Ռ. Ի.  
տիմոնացի հիօսակի ի 6

Խօսանութեան պատճեան  
Խօսանութեան պատճեան

Ա ն ի ի պատճեանի բնակառամից ևնուո, պատճեանատիկ պեղամների զարծք նարից վերսկանալու խնդիրը ևս այս գաղափարին հայտնատանը, Ն ի կ ո ւ ա յ թ ա կ ո ւ ի ե զ ի չ ը համարում եր այնան ակտուալ, վեր պիրով ևս մնան առաջ անձամբ զնկավորելու Հ ի ն Վ ա դ ա ր շ ա պ ա տ ի պ ե զ ո ւ մ ն ե ր ը ։ Տիշտ ե, մնան չաւնեցանք այդ բաղդաց. իր այլ աշխատամները Նիկոլայ Յակովլյանի հնարքներություն չտվին գալու. Հայտառան, տակայն պեղամներից տնմքա-պես ևնուո նա մնե ևնտարբությամբ ծամոքացավ կատարված աշխատամից ևնու յեկ մնաց շատ զի՞ թե՝ կատարամից յեկ թե՝ նրա արդյունքից:

Զիս այժմ Խնդը, յեկ իրանով մերշնչված աշխատամից այս համառու միարագիրը նրա տնմուաց ևիշատակին և նվիրում

Հեղինակը—յերախտապարս աշակերտ:



## ՀԻՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ



1931 թվի հոկտեմբերի 12-ից մինչև նոյեմբերի 10-ը, շուրջ մի ամիս տևողությամբ, կատարվեցին Հին Վաղարշապատի պեղումները, իրեն նախաբան նույն վայրում կատարվելիք սիստեմատիկ պեղումների. աշխատանքները տվին ըստ ամենայնի ուշագրավ և գիտական խոչոր կարևորություն ունեցող մի արդյունք, վորի համառոտ նկարդիրը յիս ուղղում եմ տալ այստեղ:

Նյութական կուլտուրայի իր բազմապիսի գանձերով հայաստանը հանդիսանում է կարևորագույն մի աղբյուր

թե տեսական հետազոտությունների և թե դարավոր փորձի պրակտիկ գործադրման տեսակետից՝ ըստ այն պահանջների, վոր այսոր առաջադրում և մեզ ծավալուն սոցիալիստական շինարարությունը:

1924 թվից սկսած Հայաստանի նյութական կուլտուրայի ուսումնասիրական աշխատանքները, ձեռնարկված Հայաստանի Հնությունների Պահպանության կոմիտեյի կողմից, կրել են դլամավորապես հաջվառման-ընդիմարացիոն բնության պարզելու և բնորոշելու համար յերկրում յեղած ամբողջ նյութը և վորոշելու ու ոլլանավորելու նրանց հետազոտական աշխատանքների տեսակն ու հետևողականությունը:

Կատարված մի շաբթ պեղումները կախված ու կտավված են յեզել բացառապես շինարարական աշխատանքների հետ և, թեկուղ տվել են անսպասելի հաջող արդյունք, սակայն հնագիտական տեղի ու նյութի ընտրության տեսակետից՝ կրել են պատահական բնություն: Խորացած ուսումնասիրությունների համար անհրաժեշտ սիստեմատիկ պեղումներ հնագիտական կենտրոնական նշանակություն ունեցող վայրերում (Արմավիր, Գառնի, Արտաշատ, Վաղարշապատ, Դվին, Ամրերու և այլն) միայն մատնանշվել են և հնգամյա ոլլանի մեջ մտել այն չափով, վոր նրանցից զհնի մի կետում սկիզբը դրվի սիստեմատիկ պեղումների, այնուհետև տարեց տարի աշխատանքները շարունակելու և այլ վայրերում ևս ծավալելու նպատակով:

Սիստեմատիկ պեղումների առաջին վայրը հանդիմացավ Նին Վաղարշապատը:

Գիտական տեսակետից Հին Վաղարշապատը առաջարկում է մի շաբթ ընդհանուր գիտական արժեք ունեցող պրոբլեմներ, վերաբերող պատմական մի եպօխայի, յերբ արեգելքի ու արևմուտքի ուժեղ բաղխումները՝ հատկապես անտիկ աշխարհի, ի դեմս հռոմեացոց, Արևելքի գործերին խառնվելը, իրենց վորոշ ազդեցությունն են ունենում այստեղ արտադրական հարաբերությունների և հասարակության տնտեսական ստրուկտուրայի ձևափոխման ընթացքի վրա. Իր նոր ձևավորումն ե ստանում ֆեոդալական ֆորմացիան Հայ-

յաստանում: Հին Վաղարշապատի պեղումները խոստանում  
են տալ տվյալ և զորիացի կյանքի պատկերն ավելի ռեալ  
ու լրիվ, քան այդ կարելի եր սպասել Հայաստանի մի այլ  
վայրից:

Հին Վաղարշապատի պեղումների հարցը վերջնականապես  
ձևավորվեց 1930 թ. սպասառի 20-ին Հնությունների Պահպ-  
ետմիակայի նիստում լուսժողկոմ ընկ. Արտո Յեղիազար ար-  
քունի ի նախառահությամբ և ակադեմիկոս Ն. Մառի մաս-  
նակցությամբ: Ակադ. Ն. Մառը կոմիտեյի կողմից հրա-  
վիրված եր լինելու պեղումների գիտական զեկավարը:  
Կոմիտեյի պլանով սխառեմատիկ պեղումների համար նա-  
խուանությամբ ժայրերից առաջին հերթին Հին Վաղարշապա-  
տի վրա կանոնավոր հետևանք եւ անկախ նրա բազմա-  
կողմանի զիտական հետաքրքրությունից, նրա մի չարք  
անխնիկական հարմարությունների ներկայության (մոտե-  
կություն, հարթաքար հաղորդակցություն, աշխատողների հա-  
մար չենքի—հարդարված բազայի, ինչպես նաև գտնված  
հնագիտական արժեքները պահպանելու համար չենքի զույու-  
թյունը), վորոնցից պուազի այժմ զուրկ են պեղումների համար  
մատնանշած մյուս վայրերը:

Պեղումների համար անհրաժեշտ նկութական միջոցների  
հաստկացումը յեղավ Լուսժողկոմատի կողմից 1931 թ. ամ-  
բան վերջում, վորից հետո կոմիտեն, համաձայն ԼԺԿ. կոլլեգի-  
այի 31 թ. սեպտ. 7-ի նիստի վորոշման (զեկ. լուսժողկոմ ընկ.  
Դր. Սիմոնյանի):<sup>1</sup> անմիջապես ձևանամուխ յեղավ նախա-  
պատրաստական աշխատանքներին, զեկավարվելով կոմիտեյի  
և ակադ. Ն. Մառի միջն 1930 թ. ոգոստ. 20-ին կայացած  
համաձայնությամբ: Միաժամանակ Լուսժողկոմատի կողմից  
կազմվեց հատուկ հանձնաժողով՝ Հին Վաղարշապատի Պե-  
ղումների Հանձնաժողովը անունով, հետեւալ կողմով՝ ակադ.  
Ն. Մառ, ակադ. Ա. Թամանյան, պրոֆ. Ի. Մեշչանինով,  
պրոֆ. Աշխ. Քալանթար, Թ. Թորամանյան, Գեորգ Ասատուր,  
Ան. Տեր-Հակոբյան և Սմբ. Տեր-Ավետիսյան. եքսպեդի-  
ցիայի կազմի մեջ մտան նաև գիտ. աշխատավորներ՝ Յե.  
Բայրուրդյան, Կ. Ղաֆարարյան, Ս. Յերեմյան, Աս. Ղոր-  
ջանյան, Ար. Հովհաննիսյան և Ս. Բարխուդարյան: Պե-

զումների պլանը, վոր կազմեց Կոմիտեյի գիտնական քարտուղարը, քննվեց և ընդունվեց Հանձնաժողովի կողմից և համաձայն կուսաքաղկումատի կողեղիայի վորոշման, համաձայնեցվեց ՀՍԽՀ Գիտությունների խնստիտուտի հետ:

Հոկտեմբերի 10-ին միայն պարզվեց, վոր ակադ. Մ առ Ն ընթացիկ աշնանը հնարավորություն չունի անձամբ լինելու մեջ մոտ և դեկավարելու պեղումները. բայց քանի վոր նախապատրաստական աշխատանքներն արդեն վաղուց ավարտված են և, մանավանդ, հնագիտական զրջանի հողերի մեծ մասը, համաձայն ժողկոմիտորհի վորոշման, Անդրկովկա-Այդե-Բանջար Տրեստին շտապ կերպով հանձնելու հարցը կար. վոր անհետաձգելի եր, բայց կատարել կարելի յեր միայն տերրիտորիայի հնագիտական ստուգումից հետո, ուստի հանաչվեց անհրաժեշտ անմիջապես ձեռնամուխ լինել պեղումներին, տարվ նորանց նետախուզական բնույթ, այս ստուգին տարվա համար անելով վերօնակի տռաջադրանք, այն և պարզել հնագիտական բովանդակուրյունն այն ընդարձակ հոդամասի, վոր դեռ տարիներ առաջ (1922-23 թվ.) տռամձնացված և իբրև Հնագիտական օրգան («Գիտարքնոցի Հնագիտական օրգան») և յենքադրիում և լինել Հին Վարչութեապատական տաղաքատեղին:

Հնագիտական տրջանը Զգարթնոցի ավերակների շրջապատճեն, տեղավորված Յերևան-Նազարշապատ խճուղու տակ (սկսելով Շնձանափոսից), 3 և 4 խորհուտակությունների ու Հոխիսիմեյի միջև՝ Վաղարշապատից մինչև Չըբանքարարությունը և Վարմադյար գյուղերը (տես տեղի քարտեզը, տիստ.), Հնագիտ. զրջանի պլանը, տիստ. П): Սա անհարթ և լինելով՝ բրածատ մի տարածություն և, ուր բլրանման անհարթությունները շարժված են զվարակությունում: Այս արտաքին տեսքի տպավորության տակ, կազմվել է կարծիք, վոր այդ բլուրներն իրենց խըլքաված շարքերով պատճական-բնական չեն, այլ նրանք քաղաքի աշխարակների մնացորդներն են, և պարսպարզուները, վոր իրենց դասավորությամբ ցուց են տակին պահպաների ուղղությունը: Այս կարծիքը հիմք և հանգիստ-

ցել նաև մի հեղինակավոր հանձնաժողովի համար (նշանակված էմիգրատորի կողմից) Հնագիտական շրջանի սահմանները վրառություն ժամանակ 1923 թվին՝ ընդունելով, վոր այդ տաշտարակներն ու «պարբապներն» իրենց ընդդրկած տարածությունը կազմում են Հին Վաղարշապատի—Կայսովոլիսի քաղաքատեղին (տես Զեկուցում Հանձնաժողովի, գործ № 100).

Մրան ույժ են ավել թերեւ, նախկին ուսումնասիրողների կողմից առաջներում (1904 թվ.) տեղի վրա քանից կատարած ստուգումներն ու հավաստիացումը, վոր «ըլուրների վրա հիմքի ել դեռ կան աշտարակների շրջանաձև խիստ հաստ պատերի հետքերը», և իրը թե «այլ ես կասկած լինել չեմ կարող, վոր մեր առաջ ընկած են մի մեծ հին քաղաքի ընդուրածակ ավերակներ»<sup>\*)</sup>:

Վերոհիշյալ կարծիքի ամրացման գործում քիչ դեռ չի խաղացել, անշուշտ, դուցի և հիմք և հանդիսացել ենաչիկ վարդապետի այն հանրածանոթ հերցուրանքն ու պաճուճավորված պատմությունը, վորով նաև Զվարթնոցի անդում անմոռում եր «կրակապաշտների տաճար», «յերայնական տաճար» և վերջապես քրիստոնեական տաճար, այն ել հենց «Եղմիածինը», իսկ շրջապատն ել «Հին Վաղարշապատ քաքարը»<sup>\*\*</sup>):

Են այս հնացած «պատմության» վրա կանգ չեյլ առնելի, յեթե մինչև այսոր ել գեռ նա տալիս չլիներ իր արձագանքը, ինչպես տեսնում ենք ի. Ա. Ռըանեցկու հոդվածում «К истории царя Давида в культуре Востока»<sup>\*\*\*</sup>). ուր հեղինակը Խաչիկի այդ սվյաջների հիման վրա «հայյերրայական կուլտուրայի տեսություն և զարգացնում»:

Անկախ այս կարծիքներից ու «տեսություններից», Զվարթնոցի (Հին Վաղարշապատի) Հնագիտական շրջանը ճանաչելու համար, մինչև վերջին պեղումները, մեզ հայտնի ելին-

<sup>\*)</sup> Մեսրոպ վարդապետ (այժմ արքեպիսկոպոս) — Եղմիածին և հայոց հնագույն յեկեղեցիներ, 1905 թ., հջ 13,

<sup>\*\*)</sup> Տես նաև Մեսրոպի հիշ. աշխ. հջ 12-16.

<sup>\*\*\*</sup> Известия Общества Обследования и Изучения Азербайджана № 8, вып. VI, 1929 г. կա նաև առանձին տրամադրություն:

գիտականորեն ստուդված միայն հետեւյալ իրական տվյալները.—

1. Զգարթնոց, իրեն պատմական վորոշ (VII դ.) ժամանակաշրջանի դորձ.

2. Հունարեն մի արձանադրություն, գտնված Եղմիածնի առուի չինության ժամանակ 1914-15 թվ.

3. Նույն առուի վրա դամբարանների բացում, բնորոշվող կավե թրձած դադաղներով (պեղումներ Թորամանյանի, Աշխարհբերդի և Սեն. Տեր-Հակոբյանի 1926—1929 թ. թ.).

4. Միենույն շրջանում, բայց Հափախմեյին ավելի մոտ, Այդ եղործական Ընկերության գինետան չինության ժամանակ՝ «սրվակավոր» դամբարանների բացում (պեղումներ Աշխարհբերդի 1930 թվ.).

Այս հուշարձանները սակայն, վորքան ել կարենոր իրենց դիտական արժեքով բայց և շատ քիչ եյին՝ վերջնական կարծիք հայտնելու համար ամբողջ տերրիտորիայի մասին, վորի միայն յերկու տարրեր կետեր նրանք բնորոշում են, ուր իրենք խմբված են:

Ձեռնարկվող պեղումները միայն կարող եյին, հիմնված իրական նոր ավյալների վրա, ասել վորոշակի խոսք ամբողջ շրջանի ինչ լինելու մասին՝ հաստատելով կամ հերթելով ա priori արված կարծիքներն ու յեղբակացությունները:

Ձեռնամուխ լինելով հետախուզման և պեղման աշխատանքներին, համաձայն մշակված պլանի, ամբողջ տերրիտորիայի մեջ մատնանշվեցին չորս առանձին կենտրոններ, վորոնք ըստ իրենց արտաքին տվյալների կարող եյին նպաստել առաջադրած խնդրի ավելի արագ ու անվրեպ լուծմանը: Այդ կետերում աշխատանքները կատարվեցին միաժամանակ չորս տարրեր խմբերի կողմից, զեկավարությամբ և ին վաղարշապատի պեղումների հանձնաժողովից կազմից այն ընկերների, վորոնք անձամբ կարողացան մասնակցել գործին:

Այդ կենտրոններն են՝

1. Զգարթնոց, զեկավարությամբ ընկ. թ. Թորամանյանի.

2. «Անասնաթաղ» բլուրը—Հնագիտական շրջանի հյուսնարևմտյան ծայրամասում, զեկավարությամբ ընկ. Սեն. Տեր-Հակոբյանի.

3. Զվարթնոցից հարավարեւելք դունկող բլուշարքը ղեկավ. ընկ Ամբատ Տեր-Ավետիսյանի.

4. Ընդհանուր հետախոզում ամբողջ տերրիտորիայի, ղեկավ. ընկ. Աշխարհիդ Թալանիթարի:

Դամիւ ու պլանի տակ զնէլու համար սիստեմատիկ պեղութեարի դործը, իրքի անհետաձգելի անհրաժեշտություն, կատարվեց աշխատանքների ընթացքում նաև ամբողջ տերրիտորիայի գեղողեղիսական հանույթը [«Շմկա»] (բացի այն մասերից, վորոնք վորեն հնագիտական արժեք չեն նկրված ացնում): յերկրաշատի Գր. Գրիգորյանի կողմից: Ամբողջ տարածությունը վեր ածվեց քառակուսիների  $100 \times 100$  մետր չափի, վարոնք քարի նշաններով իրարից բաժանված են և համարադրված (ախտ. III, Հ. Վաղարշապատի — Զվարթնոցի ջրի. Գեղեց. հանույթը):

## 1.


### ՊԵՂՈՒՄՆԵՐ ԶՎԱՐԹՆՈՑԻ ՇՈՒՔԸ.

Պեղութեարը տեղի ունեցան ավելքակների հարավակեռողմում, բաղիլիկայի մեացորդների և աշխարհիկ շնչքերի անմիջական ջարունակությունը կազմող բլբացած մասում: Տեսքին միայն վեց որ և ընդհատվեցին զեկավարի հիմանդրության պատճառավել: Չնայած դրան, ընկ. Թորամանյանն ի նկատի ունենալով պեղմած շնչքերից մեկը, վոր մոխիր և ածուխ և պարունակում, առաջ այն կարեւը դիտողությունը, թե, դուցք, այդ հրդեհը տեղի ունեցած լինի ներսին շնչարարությունից առաջ:


Այս նորությունը չեւ հակասում, այլ ընդհակառակը հաստատում և այն փաստը, վոր Զվարթնոցի շինուաթյունից (VII դ.) առաջ ել նույն տեղում յեղել են չենքեր (որինակի համար՝ Զվարթնոցի կոմպլեքսի մեջ՝ մկըքտարանի և բազիլիկի մեացորդները, վերջինիս պատերի և սյուների խարիսխների վրա պարզ յերեսում են հրդեհի հետքը): (նկ. № 1 - 2):

Այս աշխատանքների ժամանակ ղեկ. ընկ. Թոր աժանյանին սղնել ենկ. Առի աշ Ղոր զանյան:

Fig. 1. *Phragmites australis* (Cav.) Trin. ex Steud. 'Canescens' f. *canescens*.



24. 2. 2010 10:00 AM - 10:30 AM, 2010-02-24




ԳԵՂԱԿԱՆԵՐԻ «ԱՆԱՍՆԱԹԱԴ» ԲԼՈՒՐԻ ՎՐԱ ՅԵՎ ՆՄԱ  
ԾՐՉԱԿԱՑՔՐՈՒՄ.

Այս բլուրը պահպատմ և Հնագիտական շրջանի հյուսվածարկեացան ծայրամասում, Հոխիսիմենյի ուղղոթյամբ ներկային Վաղարշապատի արևելյան ստումանագծի վրա:

Այս կետի աջառուանքներն ընդհանուր ուշազրուել յան առարկա գ. «բձան», և սկզբի յերեք չորս որը առաջին յերեք խմբերն ի միտուին իրենց աշխատանքները կենտրոնացրին այսուղղ։ Դրս պատճառն այն տեղուկոթյունն եր, վոր իրերն հիշողությունն պահել և ը. Թորամանյանը (տեսնակ Մեսրոպ յեղ. — Եջմ. և հայոց հն. յեղ. եջ 18) այդ բլուրի վրա 30 տարի առաջ պատահարաց (ժանտախտից լնկում բազմաթիվ անտուններ թաղելու միջոցին) խոր փուլած ում յերեցոծ և նորից ծածկված մի պատի մնացորդի մտածին, սրբառաջ քարերով և զբանաձև, վորին տեղանակու և յեղել ինքը ը. Թորամանյանը և վորը չենց այն ժամանակ լնդունվել իրերն քաղաքի ողարսով տշտարակի մնացորդ, և քանի վոր նա արտաքին է երեսով դարձած և յեղել դեպի Հովիտիմելի կողմը, ուստի անժխտելի համազմունք և առաջացել, վոր քաղաքատեղին համարվելու յի վոչ թե Հոխիսիմելի և ներկային Վաղարշապատի ուղղոթյամբ, այլ նրան հակառակ Զվարթնացի կողմը, այսինքն ամբողջապես «Հնագիտական շրջանի» տեղում։

Զանազան ուղղությամբ փորվան տրանշեները բլուրի վրա բաց արին յերկու նվազ թաղված անտունների կմախքները, սակայն չհայտնաբերենցին վոչ մի պատի մնացորդ, բացի մի բնական ժայռամեռսից, առանց մշակման վորուել հետքի. ընդհակառակը, տրանշեների տեղում, 1—1½ մետր խորության վրա, բացվեցին մի քանի դերեզմաններ, իրենց տիպով և բովանդակությամբ հոռմեական եպոխայի, վորոնց գոլությունը բլուրի վրա, դարձնում և անհավանական նույն տեղում պարսպի-աշտարակի գոյության հնարավորությունը. (նկ. № 3):

ԹՀՀՀՀՀ 240 A 34565



Լի. 3. «Ռասանքաղ» ըլուսի պեղութեալ բարձր-



Պարզ եր, վոր առաջներում նկատված պատի մնացորդի դժոնված տեղը այդ բլուրը չե. թեկուղ և նրա շրջակայքում, թե ցածրահարթ և թե հարեւան բլուրների վրա շարունակվող հետախուզումները չհայտնաբերեցին վորսե նման մնացորդ, այլ միմիայն գամբարաններ, վորոնք բոլորն ել կարող են առաջինների հետ վերագրվել մինույն ժամանակաշրջանին:

Այսպիսի արդյունքից կարելի է այն յեղբակացության դարձն վոր ընկե. Թորամանյանի տեսած ռաշտարակի մասը՝ (սա թեկուղ և չպահպանվեց այժմ, բայց անշուշտ կա մի վորսե տեղում, կամ զուցե բացողները քանդել տարել են բոլոր քարերը, տեղում չթուղնելով վոչ մի հետք), հավանաբար յեղել և վոչ թե քաղաքի աշտարակի մաս, այլ գամբարանային վորսե կառուցվածքի մնացորդ, վորը կարող եր աւնենալ և կոլոր ձև:

Այսեղ բացված վերջին գամբարանների պեղումները կատարվեցին պիտօքապես ը. Ըե. Բայց ուր դյանի ձեռքավ, ը. Սուրբն Յերեմյանի հետ միտին:

### 3

ԶՎԱՐԹՆՈՑԻՑ ՀԱՐԱՎ-ԱՄԵՎԵԼԵԿԻՑ ՏԱՐԱԾՎՈՂԻ ԲԼՈՒՇՎԱՐԸ, վոր յենթագրվում եր լինել քաղաքատեղու արեհեյան պարսպամասը, հետախուզման յենթարկվեց ընկե. Սմբ-Տեր-Ավետիսյանի կողմից:

Աշխատանքները կարճատեն յեղան զեկավարի շատապ մեկնելու պատճառով, ուստի և նա անկարող յեղավ վերջնական յեղբակացության գալ բլուրների վերաբերմամբ, քանի վոր կատարված պեղումները վորսե շինության հետք չհայտնաբերեցին:

Այդ քընուում ուշտատակցում եր ը. Ս. Յերեմյան:

### 4.

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՏԵՐՄԻՏՈՐԻԱՑԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒՄԸ.

Այդ աշխատանքները ազին հետեւյալ արդյունքը, Պարզվեց, վոր նյութական կուլտուրայի մնացորդները հետա-

խուզման յենթակա շրջանի մեջ, կազմում են իրարից անկախ յերեք խմբավորումներ. մեկը սրանցից Զվարբողի անմիջական շրջապահ է, վորը միախառնղում և բուն Զվարբնոցի բռնած տարածության հետ. մյուսը Զվարբնոցից հարավ, բայց նրանից անկախ մի յերկարավուն նողանա է, վոր բռնում և «Հնագիտական շրջանի» հարավարեմայան բլրաշտրը ամբողջովին. իսկ յերբորդը՝ «Անանարադի»—Հոխիսիմելիի շրջանը:

Դրանցից բայցի, մնացած ամբողջ տարածությունը, ի մեջ առանձ նաև արևելյան բլրաշտրերը (ճանաչված իրեն առանձին ռայոն հետախուզության համար)՝ զուրկ և փարեվի կուլտուրական մնացորդից և, ըստ յերեսութիւն, նա իրեն անտառապատակին վայր, յերբեքց մարդու ընակավայր լեղած չեւ. Այս գիտողությունը հիմնավորվում և նրանով, վոր ընակատեղիներին հատուկ վորեն հետք (ածխային, վոսկրային, քերամիկական, մետաղե, և այլ վորեն արհեստականություն կրող մնացորդ) անկախ ժամանակաշրջանից՝ բոլորովին չնկատվեց գետնի յերեսին, ինչպես նաև նրա շերտերում, վորոնց շարքում ընդհանրապես չկա կուլտուրական շերտ. Սրանցից վերինը, նորը—ավագաշերտ է, վորի տակ մյուս բոլոր շերտերը բնական յերկրաբանական են և հետախուզման յենթակա շրջանում ամենուրեք—միատեսակ. Այս դրությունը պարզ յերեսում է վերջին տարիների ընթացքում այդ վայրում կատարված հողային աշխատանքների արդյունքից, այսպես Յերևանի հիդրոկայանից դեպի Արգ լիճ և ներդիահոսանքի սյունատեղերից (4-5 մետր խորությամբ) և սովորողի նոր ջրանցքի փորվածքից, վորը բռնում է ամբողջ Հնագիտական շրջանը՝ սկսելով նրա հյուսիսային ծայրից և յեղերազծելով նրա բուվանղակ բարձրահարթը արևելքից, հարավից և արևմտաշեքից, ըստ տեղի սելինֆի՝ ամենուրեք հայտնաբերում և միուրինակ յերկրաբանական շերտերի. Անկախ դրանից, հիջալ ջրանցքի շինության նախապատրաստական աշխատանքների առընչությամբ՝ տերիտորիայի դանաղան մասերում փորված են խոր փոսեր, վորոնք ավելի շատ շերտերի հետ են մեղ ծանոթացնում, Շերտերի գիտում-հետախուզումը դարձնում է միանգամայն


աներկրայելի լեղած բլուրների բնական ծագումը, վորոնք կադմում են շղթայանման բարձրանարթեր ու ձգչում զիլսագորապես հրատասիսարեմուտքից — հարավ-արևելյան ուղղությամբ շղթաներն իրենց միջև առաջացնում են և ցածրահարթերու Ալս ամբողջ անհարթ տարածությունը ընական շարունակություն և կազմում Արագածի լանջերի՝ կազմելով նրանց վերջին ծայրերը, վոր հասնում են Արարատանդաշտարեանին:

## I

Տերրիտորիայի ամբողջական հետախուզման հետևանքով պարզված՝ նյութական կուտուրայի տվյալներ պարունակող առաջ ի ն ու ու ա ն ն ու ու ու, ինչպես ասացի, Զվարցնոցի Երջապահն է: Այստեղ բուն Զվարթնոցի կոմպլեքսից դուրս, <sup>1/2</sup> կիլոմետր նրանից զեպի հարավ, յերևաց գետնահավասար պատի հիմք-առողջական պեղումներով բացելով այդ և զնալով նրա հետքերով, պարզվեց, վոր դա 1, 86 մետր հաստությամբ մի պորիօպ է, վորը պատռմ և շուրջանակի մի ընդարձակ տարածություն (նկ. № 4). այս տարածության կենտրոնը կազմում և Զվարթնոցն իր, նախկին պեղումներով բացված, շինությունների — տաճարի և բնակելի շենքերի — ավելակներով: իսկ այն հողամասը, վոր գտնվում և բռն Զվարթնոցի ավելակների և ներկայումս բացվող արտաքին շրջապատի միջև, ու մինչ այդ մեծ մասամբ ոգտագործվել և իրու այդետեղ կամ վարելահող ու չունի աչքի ընկնող արտաքին նշաններ — ներկա հետախուզման հետևանքով ի հայտ բերեց բավականաչափ շատ մնացորդներ հին շինվածքների, ցրված նրա բոլոր մասերում, ինչպես նաև առուի հետքեր, այդեռիդեր և այլն:

Այս շրջապարհսպը միանդամայն պարզ սահմանաբաժան և ներսի յերեմնի շեն հողամասի-բնակատեղիի, և զբու բռնը բռնը ամայի տարածության մեջ: Շրջապարսպի այն մասը (ընդհանուրի <sup>1/3</sup>-ից ավելին), վոր գտնվում է Զվարթնոցից հարավ և արևելահարավ ամբողջովին տեսանելի և գարձրած հետախուզմական աշխատանքներով — մաքրելով նրան ծածկող հողաշերաը (տես Տախտ. III), իսկ մնացած

Fig. 4. A photograph of a small, irregularly shaped, light-colored rock specimen.



մասը (արևմտյան, հյուսիսային և հյուս.-արեկելյան) վերականգնած և միայն արտաքին աղոտ նշանների հիման վրա մոտավոր ճշգությամբ։ Պարիսպը ընդհանուր առումով շըրջանաձև է, մոտ մի կիլոմետր տրամագծով։ Բացված մասում պարիսպն ունի մի մուտք չորս մետր բացվածքով, վոր գործովում և Զվարթնոցից արևելք, քիչ արեւլահարավի։ Մուտքի յերկու կողմում ընդհանուր պարսպից բաժանվում են յերկու հաստ պատեր, վորոնք իրար զուգահեռ, բայց շրջապատճին ուղղահայաց, մոտ 100 մետր հեռավորությամբ իրարից, ոնում են դեպի Զվարթնոց սրանց մեծ մասը նույնպես բացված և (ահեք Գեոգիկ, հան. Տախտ, ԱՌ՝ Զվարթնոցի շրջապատճը)։

Այս շրջապատճի և Զվարթնոցի միջև կապը միանգումայն ակներեւ եւ. ի նկատի ունենալով այն, վոր պարսպի շարվածքի միջուկի (շաղախի հետ խառնված) մանր քարերը, վորոնք կան թև իրանց տեղում—պարսպի պահպանված մասում—և թե նրա ուղղությամբ ցրված դետնի յերեսին՝ առաջքարի մշակումից ընկած քեկորներ են՝ միանգամայն նույնացող Զվարթնոցի շենքերի քարի տեսակներին՝ պետք և յեղրակացնել, վոր այդ պարիսպն, իրբեւ ընդհանուր պատճառը, կառուցված և հենց Զվարթնոցի շինության հետ միաժամանակ, կամ նրանից անմիջապես հետո, յերբ ոգտագործվել են նրա շինության քարի ընկած բնեկորները։

Ինչպես ասացի վերևում, in situ — տեղում պահպանված մասը և միայն շրջապատճի ներքեն մասը, ներկայում ագեանահավասար հիմքը, վոր յերկու յերեսից խոշոր քարերով ամուր կառուցվածք եւ թե բնչպես եր շինված պատի վերին — չպահպանված մասը, դժվար և ասել, վորովհետեւ վորեն հետք չի մնացել նա կարող եր լինել ցեխապատըստ տեղական սովորության, կամ քարաշեն (և այս գեղաքում վերին մասը գուցե ավելի բարակ լիներ քան նրա հիմքը, վորը այդ տեղում ցոկոլ եր կազմում), վոր ավելի հավանական ե, քանի վոր քարաշեն շարվածքի միջուկը կազմող մանր կտոր քարերը մինչև այժմ ել ցըված են պատի ուղղությամբ, իսկ յերկու յերեսի արտաքին խոշոր քարերը վաղուց կարող են գործածության համար տարիան

լինել վազարչապատցոց կամ այլ հարևանների կողմից, վորութիւնի վիճակին յենթարկվել են նաև Զվարթնոցի տաճարի և կից շենքերի բաղմախիվ քարեր:

## II

Նյութական կույտուրայի տվյալներ պարունակող յերկորդ օր գտնի, հնագիտական ամրող տերրիտորիայի սահմանների մեջ, ինչպես ասացի, այն յերկարավուն նողամասն է, որ բնօւամ և հնագիտական տրանսի արեվմաս-նարավային ըլրաւարքը: (տես Գեոդ. հան., Տախտ. III) Այդ բլուրների մանրագննին դիտումը պարզեց նրանց բոլորովին այլ բնույթին, միանդամույն տարրեր հնագիտական շրջանում յեղած մյուս բազմաթիվ բնական բլուրներից: Այստեղ, հռովամասի ամրող յերկարությամբ, իրարից վորոշ հնավորության վրա զանվում են հինգ բլուրներ, վորոնք արտաքուստ միանման են և, իրրեւ առանձնահատկություն, ունեն շուրջանակի կրոմիեխանման շարվածք մանր քարերից, և զրանով կասկած չեն թողնում, վոր արճեստական ծագում ունեն ու պարզապես կուրզաններ են, կուրզանալին դամբարաններ:

Հաստ յերեսույթին, ահա այս կուրզանների կրոմիեխանման — գոտիաձև շարվածքն է, վոր Մեսրոպի կողմից ընդունվել է իրրեւ ռայտարակների շրջանաձև պատերի հետքերը (տես հջ. II):

Կուրզանների գոյությունը «Հին Վաղարշապատի քաղաքանեղիք» սահմանների մեջ, վորքան և անսպասելի, բայց իսոչոր նորություն նկատելով՝ անհրաժեշտ եր պարզել նրանց տիպը, ժամանակը, կուրտուրան — կատարելով մեկի փորձնական պեղում:

Իրդեն կուրզան ֆիկսացիայի յենթարկված բլուրները հետեւյալներն են —

Ա. կուրզանը բլրաշարքի վերին (հ-ս) ծայրի բլուրն է (տես Տախտ. III, Գեոդ. հանույթ, քառակուսի 267). սրտ զաղաթը մոտ 5 մետր տրամադրով և  $2\frac{1}{2}$  մետր խորությամբ փորված ե առաջներում, գուցեց հնագիտական պե-

դումի նպատակով, բայց կատարված անկանոն, ըստ վորում, վորեն հիշատակություն այդ մասին, զրավոր կամ բանավոր, ինձ հայտնի չեն:

Բ. կուրզանը ա-ից մոտ 250 մետրի վրա գեղի հարավարենելք, նրանից ավելի ցածր. դոտիանման ըրջագծի տրամադիմը 27, 60 մետր. Այս կուրզանը Զվարթնոցից հարավ, քիչ հարավ-արեմուռք եւ (ճիշտը աղիմուռով՝  $\angle \frac{550}{30} \rightarrow \frac{250}{210}$ ), իսկ Հռիփսիմեյից ուղիղ հարավ-արենելք- (Դիոդ. հան. քառ. 283):

Գ. կուրզանը՝ ա. և բ-ի գծի վրա մոտավորապես, բ-ից ավելի քան հայրուր մետր հարավ. ա-ի չափ խոչով և նրա ձեռով գաղաթը պեղված. սրա լանջի վրա ևս նկատվում է դոտիանման քարաշարի մնացորդ (Գ. հ. քառ. 293) (նկ. № 5):

Դ. կուրզանը առաջինների գծի վրա գեղի հարավարենելք, վերջինից մոտ 400 մետրի վրա. նման և նրանց, նույնպես ունի շրջազոտի (Գ. հ. քառ. 314-315):

Ե. կուրզանների շարքի վերջինը, ամենահարավայիշ կուրզանը գտնվում է դ-ից<sup>1/2</sup> կիլոմետրի վրա, հնագիտական շրջանի ներքին ծայրին մոտ, յիշկու ճանապարհների միախառնման անկյունում. Այս կուրզանն արտաքուստ բոլորովին կոլոր եւ, բարձր չե. դոտիանման քարաշարն այստեղ ունի 36.60 մետր տրամագիծ. բայց մեծ շրջագծից՝ ունի նաև կանցենտրիք ձեռով ավելի փոքր շրջան հենց գաղաթի վրա, վորի տրամագիծը 2.55 մետր եւ, իսկ շրջագծի շարվածքն ել հետը—5.03 մետր. Սրա անդրադարձությունը՝  $\angle 15 \rightarrow Զվարթնոց$ ,  $\angle 330 \rightarrow Հռիփսիմե$ ,  $\angle 345 \rightarrow Արագած$  (Դ. հ. քառ. 331):

Բացի այս խոչով կուրզաններից կա ևս մի փայտ կուրզան (ինկուզ առանց արտաքին պարզ նշանների ու դեռ ևս չստուգված) դ. կուրզանի մոտ, նրանից մոտ 50 քայլ գեղի արևելանյութին, սայլի ճանապարհի շատկ, վոր անցնում է յիշկուսի միջով, Գուցե լինեն այլ փոքր կուրզաններ եւս, ինչպես որ. ա. և բ. կուրզանների արևմտյան կողմում՝ յիշած յիշեք հատ մանր բլուրները:

Հայոց առաջնորդութիւն կ պահպան առ առ



Այս կուրդաններն, ինչպիս հիշված և վերեռում, գտնվում  
են մի զծի վրա—մի շարք են կաղմում, վորի արևմտան  
սահմանամերձ վայրը Յ-րդ խորհանունությունն և (նախ-  
կին վանքի շղորուղները), իսկ արևելյան կողմից ծայրե-  
ծայր անցնում և մի ճանապարհ (սայլի) զեղի Ռահարան  
դժուղը:

Փորձնական պեղումի համար մեր կողմից բեղիստրա-  
ցիայի յենթարկված հինգ խոշոր և ակընհայտնի նշաններով  
կուրդաններից պետք եր ընտրել մեկը: Շուրջի վերջին  
(Ե-րդ) կուրդանը ինձ թվում եր ավելի խոստմալից, ի-  
նկատի ունենալով նրա ավելի ընդարձակությունը (36-37  
մետր արամագծով), գուցե ավելի մեծ բովանդակությամբ  
(անհատական թե կոլեկտիվ): բացի այդ, նրա ավելի ցած-  
րագիր լինելը, վոր կարող եր համեմատարար ավելի հին-  
մինելը ցույց առաջ, սակայն, նկատի առնելով նրա հեռա-  
վորությունը մեր հիմնական բազաններից (Հուփուխիմե, Զվարթ-  
նոց), վոր մի շարք դժվարություններ կարող եր առաջա-  
ցնել աշխատանքի ընթացքում, և հետազայտմ ել պահպա-  
հության գործը դժվարացնել ու անդամ վտանգել ուստի  
յես նախընտրեցի պեղման յենքարկել մեր նկարագրածներից Բ  
կուրգանը, վորը գտնվում և առաջներում պեղված (?) յերկու  
կուրդանների միջև: գրանով միաժամանակ մենք վորոց  
շափով վերականգնած կլինենք (հուշարձանը հասկանալու  
տեսակետից) և այդ հարեան կուրդանների հությունը, վո-  
րոնք թեկուղ և պեղված, բայց մնում են մեզ անհայտ ու  
կորած անհետ:

Նախ քան մատնանշած կուրդանի պեղութենքին ձեռնար-  
կելը՝ անհրաժեշտ համարեցի ծանօթանալ այս կուրդանա-  
խմբի ավելի բայց շրջապատի հետ, նպատակ ունենալով  
պարզելու նրանց տարածման շրջանը ներկա հնագիտական-  
շրջանից գուցե և դուրս, ու, յեթե հնարավոր լինի, վորո-  
շել նաև, թե վերտեղ կարող եր լինել կուրդաններ շրջու-  
ների բնակատեղը, վորի հետքեր չնկատվեցին հետախուզ-  
ման յենթակա տերբիտորիայի վրա:

Շրջապատի դիտումը պարզեց, վոր մեր կուրդանախմբից  
դեպի արևմուտք, հնագիտական շրջանից դուրս, 11/2-5

կիլոմետր հեռավորության վրա, ներքեւում փողած ընդարձակ զաշտում, պարզ յերեսում են զատկատ բլուրներ, վորոնց կուրզան լինելը հաստատվեց տեղի վրա կատարված սուրգումով։ Արանք նույնպես մի խումբ են հինգ կուրզանով, վորոնցից յերեքը խոչոր, իսկ յերեկուսը փոքր՝ մեկը մյուսից մի քանի հարյուր քայլ հեռավորության վրա։ Ուրիշ վորոն մացորդ այդ վայրում կուրզանային ժամանակաշրջանի՝ յևս առ այժմ չնկատեցին

Յերկու կուրզանախմբերի միջին զոնան այժմ Յ-րդ խորհանուեաւթյունն երանում։ կուրզանազաշոր վազարշապատցոց ժներքին հանդն ե. այս կուրզաններին վազարչապատցիք սկսնգերը են առում։ որանցից ամենաարևմտյանը (Սջմբաճնի ուղղությամբ) կոչվում է «Ղուղոփի կոնդ», վորի կենտրոնական մասը փորված ե, բացիած, ծակելով զազաթից։ Նույն վիճակումն ե, բայց կիսատ թողած, նաև մի այլ կուրզան։ մացող յերեքն, ըստ արտաքին տեսքի, մացած են անսպարասու Ղուղոյի կոնդ-ի զազաթի սկզբումը, վոր կատարված և առաջներում, ըստ յերեւյթին, զիտական պահանջ չի ունեցել՝ զգույշ վերաբերվելու դեպի հուշարձանը և պահպանելու հետազոտության համար նրա կառուցվածքը բնորոշող մասեր բայց և այնպես իրար խառնված մացորդներից կարելի յել լինում վորոշ շափով պատկերացնել նրա նախկին տեսքը. դա ըստ յերեւյթին մի սենեկանման չենք և հողակույտի տակ, վոր արևելյան կողմից ունեցել և թաղավոր մուտք, մի տիպ, վորը մոտավորապես հիշեցնում ե դանիական տումուլուսները։

Մեր կողմից պեղման յինթակա Բ. կուրզանը իր հարեան Ա. և Դ. կուրզաններից քիչ ավելի ցածը ե. նա միանգամայն կոլոր ե, վորի գոտիանման շարվածքն ուղիղ ջրջան ե կազմում. ջրջանի ներսի մասը—կուրզանի գագաթը—ծածկված լինելով բարակ խիճով՝ բոլորովին մերկ և բուսականությունից. այս հատուկ և այստեղի բոլոր կուրզաններին (տես Տախտ. IV):

\* Մերուպակի հեշտակած էկուրզանը զաշտի մեջ, վորի պեղման անհաջող փորձն ե արել բնըը 1993 թվին (ibid 14), հավանաբար այս մորին ե վերաբերում և կազ չունի մեր կուրզանների հետ։

Պեղումներն սկսեցինք կուրզանի արևելյան կողմից, նրա գետնահավասար ստորոտից, չորս մետր լայնության տրանշեյով հետղնետե խորանարով դեպի կենտրոն՝ ուր միայն համապատասխան չափով լայնացրինք հատվածի բացվածքը. վորովեսզի ընդդրկել կարողանանք կուրզանի կենտրոնական մասն ամբողջովին — աշխատանքների ամբողջ ընթացքում անշեղ կիրառելով կվաղրատներով ( $4 \times 4$  մետր) ու շերտերով պեղելու մեթոդը. 1-ին կվաղրատում քարաշար զոտուհամապատասխան մասը մենք չքանդեցինք, այլ ամբողջ լայնությամբ (3. 40 մետր) միայն մաքրեցինք արտաքին հողից և վորոշ մասում աստիճանաբար խորացրինք, վորովեսզի պարզ լինի շարժածքի հաստությունը, նաև նրանյութն ու շինելու յեղանակը (նկ. № 6), և այսպիսական ամուր և շինված, քարերն իրար կպցրած — կավաշաղախով



Նկ. 6. Բ. Կուրզանի պեղումը. քարաշար զոտու քացումը.

անդացրած։ Ընդհանրապես մինչեւ կուրզանի պեղման ավարտումը զանազան միջոցառութներով, ըստ հաւաքավորի, պահպանվել են իրենց տեղում այն բոլոր տվյալները, որո-

բանք պարզում են մեղ հուշարձանի կառուցման ընթացքում գործադրված պրիոնները, տեխնիկան, նյութի մշակման ու գործածման յեղանակը և այլն: Աջևատանքի ամրող պրոցեսը զուրկորդվել է մանրամասն չափագրումներով և նկարահանութերով: (տես Տախտ. IV և V):

Առաջին քառակուսուց հետո, փորվեց յերկրորդը, և միայն յերրորդ քառակուսում, մոտ 10 մետրի վրա (հաշվելով քարաշար զոտուց) յերեաց կենարոնական կառուցվածքի արեկելյան կողը մանր ջրաքարերով շարվածքի ձեռք (նկ. № 7): Բայ այդ կառուցվածքի բռնած տարածության՝ մոտավորապես բոլորանման՝ հողի հատվածի բացվածքը հետզհետեւ լոյնացնելով, բացվեց կուրտանի դժւառը — գամբարանային մասը, իոր կազմում է նրա կենտրոնը:



Նկ. 7. Բ. Կուրտանի պեղման ընթացքը.

Կուրտանի շերտերը կազմված են հողի և տվագի տարրեր անսակներից և կավաշաղախից: Նրանց ուղղությունն ու հերթականությունը, վորոնցով շատ հեշտությում մբ կարելի յե-

լինում հետեւել կուրզանի կառուցման պրոցեսին, պարզ ցույց  
են տալիս, վոր նրա կառուցումը կատարված է լերկու նվազ,  
այն և, նախ՝ դամբարանն ամենապես ծածկող մասը համարյա-  
կուրզանի ամբողջ բարձրությամբ, և ապա՝ հողաթումբն-  
քնդհանրապես (Տախտ. V): Առաջինը, վոր վերաբերում է բուհ-



Նկ. 8. Բ. Կուր դ անի պեղումը. Թեղանման շարժումը դամբարանի շուրջը.

դամբարանին և զինված և ավելի ամուր, ամենաներքեւում  
ունի մի շերտ կավաշաղախից, վորով ծեփված և դամբարանի  
բերանը: Բերանի շուրջը, դամբարանի քառակուսու կտրված-

ըից գուրս, նրան չուրջանակի, գտնվում ե մանր ջրաքարերով թեղանման չարվածք (Նկ. № 8), ներքին սվաղաշերտից մինչև կուրդանի դաղաթը, վոր ընդամենը և մետր հաստություն ունի՝ կազմված ե 9 շերտից — մանր կամ խոչոր ավաղալիցքերից, վորոնք մեջ ընդ մեջ ծեփված են կալաշաղախով (Տախտակ V):

Իսկ կուրդանի մեացող — գամբարանին կոնցենտրիկ — մասը, կուրդանի մասսիվը՝ կազմված ե դեղնահնողից, վոր տեղական հողն ե. սրա տակ ավաղաշերտ ե, իսկ վերևից, հասկուցիս կուրդանախմբի ներքին մասերում — խակի գույնի հողաչերտ, վոր բռնում ե կուրդանի լանջերը և ստորոտը՝ դարձնելով նրան ավելի լայնանիստ. (Տախտ. V և VI):

Կուրդանի ամբողջ միջքը հաստատուն պահելու, նրա սահմանի տուաջն առնելու համար՝ կուրդանի ստորին մասը շուրջանակի ամուր կապված ե զոխանման հարաւրով, վորը իր հատակով (հաստությամբ) հասնում է մինչև զետքինը և ունի 3 մետրից ավելի լայնություն (Տախտ. IV). Այդ գոտին, ինչպես հիշված ե վերևում, չարված ե մանր ջրաքարերով, բացի վերևի յեզերաշարքից, վոր չեղու բարձրության ավելի խոչոր կտորներ են, և ամբողջն ամուր պնդացրած ե կալաշաղախով (Նկ. № 6):

Այս ձևով առա կառուցված կուրդանը արտահուս ամրապնդված տվածքում առաջին տվածք է կալաշաղախով, վորը կազմում ե նրա վերին շերտը և ունի 20—25 սմ. հաստություն — վերից վար հետո հետեւ ավելի թանձրացած:

Ինչպես ասացի, կուրդանի կենտրոնական մասում, նրա հողաթմրի տակ, գտնվում ե հարաւր պատվարը, վորը իր ուղղությամբ ձևավորում ե բուն գամբարանը — շրջապատերով նրան բոլոր կողմերից: Սա ներսից մստավորապես քառակուսի ե, մեջքից յերկարացած հյուսիս արևելք — հարավ արևմուտք ուղղությամբ, իսկ դրամբ — ավելի կոլորացած ե, վորովհետև արևմտահյուսիս և նրա դիմաց արևելահարավովին կողմերի չարվածքները զույգ են, վորը և արտաքուստ մոտավորապես զրջանաձև ե դարձնում ամբողջ պատվարը: Շարվածքը թեղանման տեսք ունի — մինչև 75 սմ. բարձրությամբ, այսինքն ներքին մասը լայն, բայց զիպի վերին

յեղ/լքը զնալով հետզհետե՞ն նեղանում ե. արևմտյան անկուռնում յիշեք հատ համեմատաբար ավելի խռչոր քարեր են դրած մի շարքի, որոց գուցե մուտքի նշանը լինի. Այս բաշարը դրված է ուղղակի խամ հողի—գրունտի վրա (Նկ. № 8, Տախտ. VI գծանկար):

Այստեղ անսուրոր նորությունն այն է, վոր այս թեղաման : արվածքի վերին մասի քարերը, ինչպես նաև դեպի ներսը—դամբարանները կողմը նայող ամրող յերեսի քարերը




Նկ. 8. Բ. Կուրդանի պեղումը. «ազբեռանման» նորութի բացումը.

ծածկված են ինչվոր սպիտակավուն նյութի բարակ շերտով, նման ազբեռանմանի, գուցե առաջացած բուսական նյութերի քայլքայումից կամ մի այլ ինձ անհայտ պատճառից: բայց մոխիր չե (Նկ. 9 և 10ա):

Բուն դամբարանը, վոր գտնվում է քարաշարի ներսում քառանկյունի ձևով կտրված և հողի մեջ ( $4 \times 2,80$  մետր): Դամբարանի բերանը ծածկված է կավաշաղախով (մոտ 25 մմ. հաստ.): սրա տակ, հյուսիս-արևելյան կողմի անկյունում, հորիզոնական ձևով շարված քարաշերտ է, վորի

№ 11



Задан. IV Табл.

Р. Енгречанік պեղումը. Раскопки 2 го кургану  
Կուբանի ընդհանուր տեսչութ



2<sup>o</sup> LINHA DE MARINHA

/SISTEMA DE MARINHA/

DISTÂNCIA ENTRE A.

DISTÂNCIA ENTRE B.



DISTÂNCIA ENTRE C.

DISTÂNCIA ENTRE D.




MÉTROS-PELA

DISTÂNCIA ENTRE E. No. Distâncias.

Refer. V Tela.

P. Desenho de quadro. Pinturas das cores.  
Desenho de fundo branco, escuro.



E. WINDWARD POSITION  
(BOSTON TOWER 1000)

SW 1/4





Figure VI Table

A. Windward positions. Positions 1 to 49.  
 Subsequent positions 50 to 100 (positions 50 to 100)  
 (positions 50 to 100)

ՏԵ Ա/3

Բ' ԿՈՒՆԴԱԿԻ ՏՈՐՄՈՒՄ

/ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՐՐԵՐ/




Խառնութեալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՐՐԵՐ ԴԱ ՏՈՐՄՈՒՄ

Տեսք VI Տես.

Ա կողմանի պերակ Բառու Ձև պրա.

Կողմանի գույշը տակալով վահական վահական վահական



շարունակությունն ամբողջ քառանկյունու մեջ՝ ավաղած և ցեխով, հասարակ հողի շաղախով, Դրանից հետո անմիջապես սկսվում է մոխիր, վորը խառն է մանր ու խոշոր ավազի հետ (մոտ 50 սմ. հաստ.) և վերջապես, ավելի ներքեւում դառնվում է միանգամայն մախուր մոխիր, վորը կազմում է




Նկ. 10 ս. Բ կուրդանից հանգած իրական տվյալները.  
աղբեսառանձան նյութը.

մոտ 25 սմ. հաստությամբ մի չերտ: Մոխրի տակ հողի բնական շերտերն են:

Հիշածս մոխրային շերտերի մեջ, գերեզմանի ամբողջ քառանկյունում, գտնվում են վոսկրներ. այլ վոսկրները մանր կտորներով են, անխոտիր մանրացած, վառված-փոշիացած, այնպես վոր չափազանց դժվար են բանց հիման վրա վորոշակի ասելն բանց պատկանելիությունը և թաղվածների քանակը (մորդմա, կենդանմա, և քանիսի), Այնուամենայնիվ, վոսկրային վորոշ կտորներից կարելի յեղավ պարզել, վոր ավելի վերեւում (բարձրում) և արևմտահարավային և հարցամային մասում ավաղախառն մոխրի մեջ գտնվում են կենդանու (ավելի նման վոչխարի) վոսկրները, իսկ դամրացանի արևելյան անկյունում - մարդու մանրացած վոսկրներ, վորոնց թվում և դանդի մասեր, ատամներ: Մարդու վոսկրների մնացողներ շարունակում են լերևալ շերտի ամբողջ


հաստության մեջ մինչև սաքուր մոխրի չերտը. այստեղ մարդու վոսկը բները վոչ միայն արևելյան մասում, այլ բռնում են դամբարանն ամբողջովին: Չնայած մոխրի այդպէսի հաստության, այնուամենայնիվ, պետք ե յենթադրել, վոր այստեղ թաղված ե հրկիղման միջոցով մի մարդ միայն, նկատի առնելով վոսկը բների քաշակը, վոր մեծ չե (նկ. 10ը): Մոխրի մեջ տծուխ բարեգովին չկա. (Դամբարանի ողլոն. տես Տախտ. VI.)



Նկ. 10: Բ Կուրզանից հանգած իրական ավաշները.  
Քոսկըներ՝ մարդու և գոճի կենդանու.

Բուն գամբարանի ամբողջ բովանդակությունը կազմում էն մոխրը և վոսկըները:<sup>5</sup> իրական տվյալները չափազանց քիչ են ե, ըստ յեւեռոյթին, պատահական բնույթի. պըտնվեցին միայն մի հասարակ խեցիի բեկոր (իր Աֆ) և Յ— Ք մանր կտորներից մի ինչ վոր քերամիքական ամանի մաս ունիրակոտից, վոր շինված ե չափաղանց նուրբ. բարակ պատերով և վողորկած-շլիֆովվկա արված՝— ըստ տեխնիկայի միանգամայն նույնացող միքենյան զործերի հետ (իր Ա 5): Միենույն ամանի այլ վորեւ մասեր չպահպեցին: Այս հիմք ե առլիս կարծելու, վոր զերեղմանում գտնված այդ բեկորներն ել գժվար թե համարվեն հատկապես դրված իրեր, այլ հավանաբար պատահական կերպով ընկած լինեն թաղումի ժամանակ — կուրզանը կառուցելիս:

Նույն ձևով պետք է բացատրել նաև այս մյուս իրերի  
շոշաթյունը կուրզանի զանազան հետեւում, վոր մեղ  
և նորի պեցին պեղման ընթացքում (նկ. № 10), ոյն ի՞



Ն. 10 դ. Բ. հաւքանից հանված իրական ավալները.  
քերամիկական բներդներ.

1. Փոքրիկ որսիդաքար-քրիչի նմանությամբ (скребок),  
ողիլյան տիպի, վոր դանվեց կուրզանի վերին շերտում պե-  
ղումների հենց սկզբում (նկ. № 10կ իր № 1).

2. Կաղին ամանի մի բնեկոր, վոր դանվեց կուրզանի ներ-  
ուռմ, բայց զերեզմանի վրա, նրա արեելյան մասում (իր № 2).

3. Կաղին հասարակ ամանի յերկու բնեկորներ, գերեզմա-  
նից զուրս, հյուսիսային կողմում, քարաշարի արտաքին  
յեզերքին, կուրզանի լիցքի ամենաներքելի շերտում (իր № 3).

4. Մի բնեկոր կավե շատ հաստ ամանից—դուցե կարասի  
կամ ավելի ջուռ վաղայի կտոր, ըստ աննշան կորության —  
վորը շատ չափ թրծված և և արտաքուստ շիփովի կա արված, սա  
նույնպես դանվեց կուրզանի ներսում զերեզմանի արտա-  
քին քարաշարի հարավ-արևելյան մասում, շարվածքի տակ  
(իր № 6).

5. Դասկըցա մի իրի փոքրիկ կտոր, թերթանման, նուրբ  
մշակված, յեղերքին զուգահեռ ունի մի կիծ թեթև ակո-  
սանման դրոշմված-տիշնչում (իր № 7).

Ստուգում կատարեցինք նաև գերհզմանի արտաքին քաշարի մեջ—պեղելով նրա զանազան մասերը ամենուրեք միորինակ ձեռվ՝ պարզվեց, վոր քարաշարը զրված է ուղղակի խամ հողի (զրունակի) վրա և չարվածքն իր մեջ վնաշինչ չի պարունակում:

Այս բոլորից հետո անհրաժեշտ և նկատելի վոր դամբարանի մեջ այնպիսի իրերի բացակայությունը, վորոնք հաստեղապես դրված լինելին նրա մեջ (այդ թվում, ինարկե, և մետաղի իրեր), անշուշտ պետք և բացատրել ոխոռությունի կապված դիմակի հրկիզման հետ:

Տերրիտորիայի ամրոցական հետախուզումը և թ. կուրշանի ոչնազարդը, վոր կատարվեց Ա. Հ. Բ. Թ ա ն թ ա ր ի զեկավարն, թյամբ, ոչնազարները յեղել են յերշտառարդ դիմ։ այխատափարները բ.թ. Կ ա շ ո վ ա զ ա ր յ ա ն (մշտական) և Ա ր ա մ Հ ո վ հ ա ն ի ո յ ա ն ե ն ։ կուրզանի աշխատանքներին մասնակցել են նաև ը. ը. Ա. Յ ե ր ի մ յ ա ն (3 որ), և Մ ա ն վ ե լ յ ա ն (3 որ), Ա. թ ա ր ի ո ւ զ ա ր յ ա ն (2 որ) և Ա. Զ ո յ յ ա ն (1 որ)։ Կուրզանի ավարտական շափակումն և դժանկարումը կատարեց ճարտարապետ Հ ո վ հ ա ն ը։

### III

Հնագիտական տերրիտորիայի ընդհանուր հետախուզուման հետևանքով ձեռվորված յերեք տարրեր հնագիտական կենտրոններից լեռուրդը Հռիփիսիս—Անասնարադի տօնանի և։

Հետախուզման համար նախորոք մատնանշված կետը Անասնաթաղ թուրն եր (Դ. հ. քառ. 116 և 117), վորի վրան և շուրջը կատարված աշխատանքների արդյունքի մասին յես խոսեցի վերեւում (հջ 16—18)։ Այս արդյունքն այն կարեւը նշանակությունն ունեցավ, վոր միատիպ զամբարանների շարքը Անասնաթաղ թուրից—արեւյշան ռազմական թրամք հասավ մինչև թրձված կավե դադաղներով զամբարանների գաշտը առուի տակ (Դ. հ. քառ. 115, 116), վորոնք պեղման են յենթարկվնել առաջներում 26—28 թվականներին։ Նույնիսկ Ել ավելի արեւյշ—առուի դլիսին (աջ տիկին) բլուրի վրա (Դ. հ. քառ. 113) դարձյալ բացվեց դամբարան կարասանման դադաղով։ Այսուղից մեծ տարածությունն չե մինչև այն կետը, առուի յերկրորդ կամուրջի մոտ (Դ. հան. քառ. 112), ուր 1914—15 թվ. զանվել և հունարեն արձա-


Դագրությունը — դամբարանային բովանդակությամբ, Բացի այդ, մենք տեսնում ենք, վոր այդտեղից հյուսիսային ուղղությամբ ևս մինչեւ խճուղին, նույնպես դամբարանների դաշտ և, վոր կարելի է յեղբակացնել արտաքին վորոշ նշանների, Հիման վրա (յիրկայշանեած փոքրիկ սալաքարել գիթ անկիւծ դեսնի մեջ, վորոնց վերին ծայրերը հազիվ յերեվում են զեանալավար), վորոնք այս ու այնտեղ պատահում են այդ տմբռողջ տարածության վրա, Այսպիսով այդ տարածությունը արեմտյան կողմից դալիս միախառնվում է այն շրջանի հետ, ուր այժմ զանվում են Այգեգործական ընկերության շինությունները, վորոնց կառուցման միջոցին 1930 թվին բացվեցին դամբարաններ խիստ ջարքերով, Սա զանվում է Հորիֆսիմեյի ուղիղ դիմաց — նրա հարավարելյան կողմից, խճուղու տակ, և ուղղակի միախառնվում է Հորիֆսիմեյի վանքի շրջապատի հետ, վորը ամբողջական ձևով — ինչպես ցույց են տալիս նաև զանաղան ժամանակներում պատահական դյուները — կազմում են հեթանոսական - քրիստոնեական խառն շրջանի դամբարանների դաշտ (նկ. 12):

Այսպիսով, մենք տեսնում ենք, մի ընդարձակ տարածություն, վոր Հորիֆսիմեյից և ներկայիս Վաղարշապատից սկսելով դեպի արևելք համարյա մինչև Զանգուի առուի թեքումը, վոր ունի մեկ կիլոմետրից ավելի յերկարություն և քիչ պակաս լայնություն՝ յերեսմն բռնված է յեղել բացառապիս դամբարաններով. (տես Թարտեղ-Տախտ. I և II):

Դամբարաններն ամենուրեք միատիպ չեն. մինչեւ որս կատարված աշխատանքներով մեզ հայտնի են դարձել մինչև նինիկ տարբեր տիպեր, և նույնիսկ, ըստ յերեսութին, նրանք կազմում են վորոշ խմբավորումներ, այսպես՝

1. Հորիֆսիմեյին կից (պեղ. 1930 թ.) խմբված են դամբարաններ յերկարածե, արկղի նմանությամբ, կողք-կողքի կանգնեցրած սալաքարերով ձևավորված և նույնպիսի սալերով ձածկված վերելից. սրանք բնորոշվում են փոքրիկ տպակե սրվակներով, վորոնցից մեկմեծ հատ զբված եյին պերիպատաններում. Գտնված են բազմաթիվ զարդարանքներ սերպուկից, աղատից, ապակուց, արծաթից, բրոնզից — մա-

տանիներ, զեմժաներ, հուլունքներ, փերուլու և այլն (նկա-  
լ 13 ս., 14—15. տես Տախտ. VII—VIII, էջ 31).



Նկ. 12. Հարդարածիցի բրունարանի ողաքառակերպ (1930 թվ.).



Նկ. 13 ս. Դամբարանակերպի հրապ. տիպունիք. Արդիշամանահանություն.

2. Նման առաջինին, սակայն բուն գերեզմանն առանց սալ քարերի, այլ ուղղակի կտրված հողի մեջ, վերեից ծածկած սալը ըլքով։ Արվակներ չունեն, գտնված իրերի մեջ (ըստնողեւ զարդարանքներ, հուլունքներ) կա նաև մի հռոմեական դրամ (տես էջ 51—52)։ Այդ տիպն Անասնաթաղինն եւ (պեղ. 1931 թ., քառ. 116, 117). (Նկ. 13 բ-թ)։



Նկ. 13<sup>թ</sup> Դամբարանների հինգ տիպեր։ Հողը կտրված—սալածած է։

3. Անասնաթաղ ըստ ըից զեալի արևելք ցածրահարթ տեղում, առուի տակ, խմբված հն գամբարաններ հատուկ ձեխ դադալներով՝ մոտավորապես նման ներկայութեան տիպին, սակայն չինված թրծված կազից; առանձիւ հարթ կափարիչով, վորի վերեից գարձար շալոված են սալաքարեր, Ուշագրավն այն եւ, վոր այս տիպի դամբարաններում իրեր ըուլորովին չեն գտնվում, բացառութեամբ մի մետաղի իրի (4-5 կտոր-

սերով), վոր ըստ լեռհանյթին հայելիք և (սղեղված մի քանի  
նվազ՝ 1926-28 թվին, քառ. 114, 115) (նկ. 13 դ).


4. Վերեկի հիշված խմբից վոչ հեռու, առուի մյուս կողման  
մուտքամբ 1930 թվին բացվել և մի գամբարան, վորի գաղաղը  
նույնպես թրծած կավից և, յերկարածե, սակայն նման  
խնոցու, կամ ավելի ջուտ կիսակոշիկի, բազմակի նման. բե-  
րանը բռնում և յերկարության 2/3-ը, և յեղել և փակված  
առանձին աղյուսներով. առանց իրերի (նկ. 13 ե, 13 է).




Նկ. 13 դ Դամբարանակը հինգ արողեր. Հողը կորքած —սալտած ոճ:

5. Միկնույն միջավայրում (քառ. 113-ում): մի այլ էա-  
ցնոր թաղում, վոր բացվեց 1931 թվի սկզբումների ժամա-  
մանակ, կարսասախող և, վորի բերանը մի ծայրումն և և  
կուլոր, իսկ բնակն ըստ ձեռք՝ ձվածիր, մի փոքր հուզ ալիս

դուռկատեղում: Արա մեջ գտնված են մեծ քանակությամբ  
զարդարանքներ՝ բրոնզից, թանգարին քարից (ոսկին),  
արծաթից՝ մատանիներ, զեմմաներ, վզի մանյակ, հուշ-  
յանքներ և այլն. (Նկ. 13 Ա, նաև նկ. 14 - 15. Տախտ. VII - VIII):



Նկ. 13 Ա. Դամբարանների հինգ արտեր. Բրոցված կողից՝ դադարևածություն:




Նկ. 13 Ա. Դամբարանների հինգ արտեր. Բրոցված կողից՝ բաշմականման:

6. Այս գամբարանային հինգ սիսպերին պիտք ե ավելաց-  
նել նաև հունական արծանազբության գամբարանը, վորից

վորեն հետք կամ տեղեկություն, մեղ հասած չլինելով՝ ան-  
կարող ենք վորոշել նըա տիպը—արդյոք նման հիշածս տի-  
պերից վորեն մեկին, թէ մի այլ. Նորը (տես էջ 12, 36, 52—  
53, նաև 66—70՝ Հավելված 1.):



Նկ. 13 գ. Դամբարանի բիզու արտիկը կարառակիցն:



Նկ. 13 է. Ճարպեհական կավի գաղագ.

Թվածու առաջին չորս տիպերում դիտկները դրված են  
պառկեցրած մեջքի վրա, իսկ հինգերորդում—կոչէ ածոց,  
նման սովորական կարառաթաղի:

Ուղղությանը բոլոր տիպերինն ել ընդհանուր առմամբ արևելք—արևմուտք և (զլուխն արևմտյան կողմում, իսկ թրամած կազն յնրկարանէ զադադղներում—արևելյան կողմում), սակայն հաճախ մեծ թեքումներով զեղի հյուսիս, և ուղղակի հյուսիս—հարավ (գլուխը հարավում)։ Կտրասառախոց Արդումի մեջ բերանը դարձած զեղի հյուսիս-արևելք։

Դամբարանների տիպերի այսպիսի բազմազանությանը, սակայն, չի բացասում նրանց բոլորի ներքին կապը ժամանակի տեսակետից։ Նրանց վոչ միայն ընդհանուր ուղղությունը—զիրքամորումը, այլ զիսավորապես մեջը գտնված իրական այլանունները մատնանշում են մի ժամանակաշրջանի վրա, վորին պատկանում են բոլոր տիպերն ել. զա հառմեական եւ։

Այսպիսով ստացվում է մի ընդարձակ հանգստարան միելնույն ժամանակաշրջանի, վորը ներկայացնում է մեծ բազի նեկրոպոլի։

Պարզվում ենույնպես, վոր այդ քաղաքը վոչ մի զեղքում չեր կարող լինել իր այդ նեկրոպոլի արևելյան և հարավային կողմերում—վոր ամայի անապատ և—այսինքն ներկային Հնագիտական շրջանի մեջ, այլ նա անշուշտ տարածվելին և յեղել նրա ուղիղ հակառակ՝ ներկային Վաղարշապատի-Հռիփոխմելի ուղղությամբ։

Ավարտելով Հնագիտական տրամի ամբողջ ՏԵՐԻՏԻՏԻՒԹԻՒ ընդհանուր դիտումն ու հետախուզումը և պարզելով նրա ընույթն ու հնագիտական բովանդակուրյունը, տեսնում ենք, վոր նա ըստ եպօսաների յիշ կույտօւրաների յերեք խոռոր ու իրարից տարբեր տրամների և բաժանվում—

1. Զիւրբնոցի—Ներսեսյան օհնարարուրյան տրամի (Գեղագիտություն. Հան. 1)

2. Հռոմեական հպատակի հաղաքի մեացորդների տրամի, հաստկապես նրա նեկրոպոլի, (Գեղագիտություն. Հան. III). յիշ

3. ավելի հին կուրզանային օհնարարուրյան տրամի, (Գեղագիտություն. II).

Սրանք յերեքն ել անկախ են մեկը մյուսից թե իրենց ներքին կապով—բովանդակությամբ և թե իրենց տեղով, բանած տարածությամբ։

Մի քիչ ավելի ծանոթանանք յուրաքանչյուրին։

Պարզորովող յ ե թ ք կուլտուրական խմբավորումներից ամենահինը կուրզանների ժամանակաշրջանն է (տես Էջ 23—36), զորն այս գեպօրում կարենոր նորություններով և հանգիս գալիս:

Կուրգանի համեմատաբար պարզ տիպը, ինչպես նաև նրանում ներկայացված թաղման ձեզ—դիտկի հրկիղման միջնորդ—իրրե արխայիք յերեւոյթներ կուրզանաշխարաբռարաբյան մեջ՝ ողնում են մոտավորապես վորոշելու նրա ժամանակը։ Սակայն ներկա գեպօրում նյութն իր կունկրետ միջավայրում, ուր մի այլ նախառինակ չունենք մինչ այժմ քննության առնված զիտության կողմից՝ պահանջում ե մեզանից զեկավարվել վոչ թե լոկ ընդհանուր անալոգիայով, այլ առկա բոլոր տվյալների հիման վրա աշխատել պարզել այն արտադրության յեղանակն ու սոցիալ—տնտեսական ստրուկտուրան, վորի արդյունք հանդիսանում են այդ տվյալները, վորպեսի կարելի լինի ճիշտ լուծել նրանց ժամանակի հարցը և տեղն ու գերը Հայաստանի պատմության պրոցեսում։

Այստեղ անշուշտ մեծ նշանակություն պետք է ունենան կուրզանի մեջ գտնված իրեւը. սրանք թեկուզ և շատ աղքատ են ներկայացված և գուցե պատահական կերպով միայն տեղ գտած նրա մեջ, բայց և այնպես միենույն ժամանակի գործեր ճանաչվելով՝ ուշադրավ յերեսույթ են հանդիս ընթառում. Լինելով տարրեր արտադրության որինակներ—մի կողմը հասարակ, իսկ միյուս կողմից բարձր տեխնիկայի գործեր, նրանք զբանով, անշուշտ, պարզում են նախ և առաջ իրենց ծագումը — տեղական (հասարակը) և սարքերի կրյուս (այս գեպօրում եղեյան կուրտուրայի) արտադրություն. (տես նկ. 10 գ.).

Պարզվում ե հետեւապես և կապը անտիկ աշխարհնի հետ. սու կարող ե լինել Միքենյան քերամիկայի լայն տարածման շրջանը Արևելքում (13—12-րդ դ. մ.թ. թվ. ա.թ.), վորը և չի նակասում կուրզանի տիպի յետ բաղման ձևի ժամանակաշրջանին։ \*) Համենայն գեպու, ինչ պերարերում ե թաղման

\*) Միքենյան կուրտուրայի հատկապես զոհագոր ներկվածք, ինչպես և գողորկած կարմիք քերամիկայի՝ տարածումն հարցը առաջնայի ուսումնական

Հրեիութման ձերին, յերբ հետը այլ իրեր կարող են գրված լինել կամ չլինել՝ զոյություն և ունեցել Հայաստանում յերկար ժամանակի ընթացքում, զուգահեռ թաղման այլ ձեւրին, ամրող բրոնզի կուլտուրայի շրջանում — սկսելով ներլութից. սա ներկայացված և բազմաթիվ որինակներով, յերբ այրիած մնացորդները (մոխիրը վոսկրների հետ) գտընվում են անյունապահ սափորների (ուռնաների) մեջ և դրված են դամբարանում։ Այս տեսակիտից չափաղանց կարևոր

այլողները՝ կողմէց քննության են առնվում և կապվում այդ ինքը հետ նաև Հայաստանում, եղած նույն բնույթից մնացորդները. բայց նրանց կողմէց (Բազայեսկի, Մեշանիսով և ուրիշները) մեջ են բերվում բացառութեան նյութերը մրայն, վարոնք գանգած են Կորմը Վանքի (Աստուածածինաբանների ըրբ)։ Առաջ և մեջ բեկոր ակադ. Մարտիրոս Կանչեակում (ի գեղ նկատեմ, վոր Վանքակ պյուղը գտնվում և Խորեգ. Հայաստանում, Լոռում, Ջարագետի—Դերեզի վրա, Ասենանի և Հաղպատի մշտի. Բ. Թողարկակին («Կրտ և Միկոն» հջ. 18) սիրմամբ նրան զնում և Արագածի ցընանում, իսկ Բ. Մեշանինով. (Խճ. Ակադ. Իշտ. Մատ. Կըլտ. Վ է. հջ. 413.)— համարում և Վրաստանում։ Եյութերի արդպիսի սահմանափակումը թյուրիմացություն և, անջատ, բանի վրա Հայաստանում յեղած այլորինակ Եյութերը ուրիշ չափ որինակներով ևս հայտնի եին գեղ վաղուց (որ. այն, վրա կային նշանակութեան հնագիտական թանգարանում, ամեմ կուլտ. Պատմ. թանգարանում Յերեանում, ինչպես նաև նախկին Կովկասյան [այժմ վրացական] թանգարանում տարգամ Հայաստանից), և պատահարաբ դանվել են ավելի մեծ քանակությամբ նաև վերջին տարիներու մեր աշխատանքների մրջութիւն Հայաստանի տարրեր վայրերում (այդ ժաման. 1924 թվին մեր կողմէց գրված ակադ. Մատին նյութ. Կուլտ. Պատմ. Ակադեմիային «Տիրույնու կուլտուրայի» առընչությամբ) — Կուտայքի (Առինջ), Յերեանի (Թաղացինդ. Մուսանամթ թափա), Խջմիածնի (Աղավնատուն և այլուր), Արարանի, Թալինի—Արագածի, Հանրականի (Հառիճ և այլն), Ն-Բայազետի—Սևանա, Դիլիջանի, Լոռու ցընաներում, Զանգեզուրում—վորով պարզվում և նրա համատարած ընկելը Խորե. Հայաստանի սահմաններում։

Մատնանշելով վերոհիշյալ հանգամանքի վրա, յես այստեղ չեմ խոսում բնագնանքապես «Միքանյան» քերամիկայի տարածման հարցի գրամացքի մտնին, վոր նու ունի ներկայումն զիտության մեջ, վորով նրա անկառկատելի հայրենից և համարվում Ազեյան ցընանը, իսկ տարածումը Աքեղիսյան յերկրներում հասցնում են Յեղիպասունությունում և այս գիտական հայությունում առ ք. մեր թվ) և Թուրքեստան (Անուոյ) Հայաստանը Համարելով նրա անցման կամուրջ։

Նորի և առաջ այս մեծաքանակ նյութերը—Արեկլցում թե Արևմուտքում (վորոնց քանակն ու տարածման ցընանն Ալ ավելի և ընդարձակվում

որինակ և ներկայացնում մեր նոր սյութերի շարքում նա-  
ճապատմ (Կոտայք) բացված անյունապահ սափորը, վոր դըր-  
ված և հատուկ քարե պահպանակի մեջ. այստեղ մոխրի և  
մարզու վառված վոսկըների հետ գտնվել և սիսակ ուրծիքը



Նկ. 11. Աճ, ուժապահ սափոր՝ բարե պահպանակի մեջ՝ դահլիճած առաջնական մասում:

կայծաբարից, վոր ատամնավոր և – սղոցի նմանությամբ  
Սափորն ինքը թե իր ձեռք և թե բարձր տեխնիկայով նույն-  
պես հանդես է բերում նույնություն միքենյան կուլտուրայի  
մասցորդների հետ (Նկ. 11):

«Տրիորյան» կուլտուրայի հայտնաբերումով), թեկուղ և իր անվանիկայով  
բավականչափ մշտրինակ արտահայտություններով, սակայն մի աժքոյ-  
շություն համարելի ու մի ժագում ու մը կենարոն նըան վերապրելն իրուն-  
ամբողջապես մի տեղի արտազբություն՝ թվական, թե ապացույց և հարցը-  
դես նու պրոբլեմատիկ լինելուն, և ապա՝ անդամ յեմե ընդունելու:  
Անհեղ նրա ծագումը մի վրոշ կետում, վերն և այդ կետը – Ագիյան  
լրջանը, թև Միջադեպը (Սուզա – Եղամ, Սումբը), Աղքապտոսը, Փ. Ասիս-  
հայտատառը:

«Միջնայն» քերամիկայի մի հայրենիք արդուղ անսակեան, անընչա-  
կարիք ունի վերահսկման:

կուրպանի գամբարանի մեջ առանձնապես աչքի և ընկնում մոխիրի չափազանց տառըրլունը, վոր կազմում և հաստ շերտ: Այս յերեսոյթի բացատրությունն ըստ իս դանդում և հենց իր մեջ՝ մոխիրը բոլորովին չունի իր մեջ ածուխ, մենք շգանքը ածուխի և վոչ մի հետք: Այս հանդամանքը պեղման միջոցին յենթադրել տվից ինձ համարելու մոխիրն առաջացած վոչ թե փայտից, այլ ծղութից կամ ուղղակի ոթարից: Այս յենթադրությունը հաստատվեց մոխիրի ըստիսկան անալիգով, վոր կատարվեց Աննինդրադում՝ Նյութական եռուլուուրայի Պատմության Ակազիմիայի Հնագիտական Տեխնոլոգիայի Խնսախտուտում: Այս դեպքում, ինարկե, դառնում և հասկանալի նաև մոխիրի մեծ քանակը; վոր կարող եր ստացվել անդամ մի մարդու և հետը դրված դոճի կենդանու (կենդանիների) հրկիզումից:

Աթարի ներկայությունն այսուղ գամբարանում և, ուրեմն, նրա գերակառող գործածությունը այն ժամանակ կյանքի մեջ, տվյալ հասարակության կենցազն ու անտեսական պատկերը ընորոշելու տեսակետից, հանդիսանում է ուշադրավ հանդամանքն:

Այս հանդամանքն ահա ել ավելի և խորանում մի այլ ժամանամանությամբ՝ իրական տվյալով, վոր մենք գտնում ենք կուրդանի մեջ՝ նույնպես առաջին անդամ նկատող մեր հնագիտական իրականության մեջ—այն սպիտակ ազըստանման ժերոր, վոր բռնում և գամբարանը յեղերափակող քարաւարքի յերեսն ամբողջովին (տես եջ 32, 33, ներ. 10 ա): Այդ տարրորինակ նյութն սկզբում յերկրաբանների կողմից ընդունվեց իրեն իսկական աղբեստ, բայց ապա մանրադիտական հետազոտման յենթարկվելուց հետո՝ պարզվեց նրա գուտ բաւական ծազզում: Այդ նյութի գույնը, տեսքը, ինչպես նաև հականրային հատկությունը, բացառը լուսում և նրանով, վոր նա ներկայումս միանդամայն քարացման վիճակումն և գտնվում, բայց իրեն կազմությամբ նա ամբողջապես ներկայացնում և կսլատարական բույսերի հացանոտիկային—հաշկուպես ցարենի—և այլ խօսաբայցների հաւացած մասեր: Ահա այս արդյունքը տվից ը. Սովորա թամամշանի (Պամբարյանի) անատոմիական հետազոտու-

թյունը, վոր առաջինը քննության առավ այդ նյութը, և վորը հետո սիանդամայն հաստատվեց կենինդրագում Հնագիտական Տեխնոլոգիայի ինստիտուտում կատարված աշխատանքով, (Տես Հայելիած Ա-ԵԲրածո ցորեն կուրունի պեղութեարից» հջ 77—82):

Հացաբույսերի, մանավանդ ցորենի ներկայությունը դամբարանի մեջ, վոր բացատրվելու յե սիստուալով—կառված աիրող կրոնական հասկացությունների հետ—ի հայտ և բերում, նախ և առաջ, տվյալ հաստրակության զլիսավոր զրագունքը, հողագործության—իրեն արտադրության զեկավար ձեի—ծագկած վիճակը, վոր այդ միջավայրի պայմաններում կարող եր լինել միմիայն կատարյալ վոռոգման, սիստեմի առկայությամբ, ինչպիսին մենք պատկերացնում ենք տոհմական հաստրակարգի պայմաններում, վորը հաստափում և և այլ բազմաթիվ տվյալներով<sup>\*)</sup>): Միաժամանակ հասկանալի յե դառնում ընդհանրապես պատզարուծական կուտուրայի մինչ այն աստիճան զարգացումը, վոր խնայվում և պաղատու ծառը իրեն վառելիք գործածելու: Աթարի գոմինալ գրությունը գուցե ապացույց և նաև անտառների չգոյության, կամ չափագանց սակավության, յերբ ամընդա փայտը կարող եր միայն շիանաբարության վրա գործադրվել:

Ցեղած բոլոր տվյալները—դիակը վառելը, իրեր չդնենլը դամբարանում, հացաբույսերի մասնակցությունն ու դեր խաղալը սիստուալի ժամանակ—ռեալ կերպով բնորոշում են Հայաստանի հին բնակչի, այս դեպքում տոհմական հաստրակության, իդեոլոգիան:

Կուրզանային դամբարանը, վոր սովորաբար կառուցվում եր համայնական ձևով, իրեն ընդհանրապես համայնական աշխատանքի արդյունք, համեմատությամբ այլ տվյալի հաստրակ ձևով շինված սովորական զամբարանների՝ ունի հասուկ նշանակում իրեն տոհմապետի—տոհմի կամ տոհմերի առաջնորդի—գերեզմանն նկատելով պեղված կուրզանն իրեն այդպիսին, այն և սօմապետի կամ նահապետի դամբարան,

<sup>\*)</sup> Աղջ. Թագանթար — Մի հագույն ջրաբաշխական սիստեմ Առց Հայուստանում (տաղ.):

և հաւագրելով այն՝ մյուս համանման (այսինքն տռնմի մասնակցությամբ կառուցված) հուշարձանների, հետ մինչնույն տահմական միջավայրի այլ հարեան ըրջաններում, տեսնում ենք, որ ավելի լինային մտահրում, Արագածի փեշերում և սուրբին ու մերին բանջերում, նրանց համապատասխանում են զուտ քարաշին կուրդաններ (քարարլուրներ տառնց վերնազի), շան մեղալիթներից տառնձնուալիս աչքի շնկնող դոլմեններ, կրոմէլեխներ ու մենհիբներ, և անգամ ովիշապարձունք զամբարտններ, վորոնք բոլորն ել դիտվելու յի՞ն իրեն տառջնորդների գերեզմաններ, և տառջինների հետ մինչնույն ժամանակաշրջանին պատկանող դորձեր:

Դաշտային մասի և լեռնային շրջանի դամբարանային հուշարձանների միջև ու յերեւյթի խոշոր տարբերությունը մեծ չափով բացատրվում և տառչացած նր խոկ միջավայրի տրամադրած շինանյութի ազդեցությամբ՝ զուտ քարային շենք—քարքարուս շրջաններում, և միայն հողից—դաշտային մասում, ուր քար չկա, այս հանգամանքը խոշոր դեր և խոպացիկ թե նրանց տիպերի մշակման և թե կառուցման յեղանակի մեջ. թեկող և թվում և թե ընդդանուը տիպական կազմ աշնուամենայնիվ պահպանված և ըստ հնարավորի այսպիսով՝ մեր կուրպանների տրամադրուստ գոտիանման քարքարը (ջրային բռնաքարերով, վորոնք միայն հանգիպում են կուրդանների տնապատճին ըրջապատռում) վորքան ել կոնստրուկտիվ նշանակություն ունենար կուրպանի միջ այնուհանդերձ նա կրում էիսի արտահայտումն ե. մի դեմքը վորոնք զուգորդված ենք տեսնում հիշածս բոլոր մեզավելոյան տիպերը:

Այս հանգամանքն ահա ի նկատի ունենալով, մենք կուրպաններ շինող տոհմականների բնակարանները ևս նույն ձևով ենք պատկերացնելու—հողաչեն, զալցե փայտե ոյուններով և զերաններով կապակցված, բայց, հավանաբար, զետնահարել, ուստի և առանց արտաքին նշանների<sup>8</sup>):

<sup>8)</sup> Մեր ուս յենթագրությունը բնակարանի տիպի վերաբերյալ հատապելիք 1934 թ. մայրակին կենքնականի մոտ բացված համախարդական բնակառեղիքի իրական տվյալներով («Անորհ. Հայաստան» № 113. 21 V. 31 թ.):

А. Калантар—Открытие дехадского поселения близ Ленина-

Յեվ յեթե այդպիսիների գտնված տեղերը պարզելու հնարավորությունը դեռ ևս չունենք տռանց հողային համապատասխան աշխատանքներ կտարելու — ինարկի բնավ չկառկածելով նրանց գոյության մասին — պոնե այն կենտու հատ ժայռամասսիմները, վորոնք կան հարթավայրի վրա այսուայնտեղ այդ միջավայրում, պահպանել են իրենց վրա գետնի յերեսին բաղմաթիվ հետքեր — կուրդանաշինարարաց բյան ժամանակաշրջանին վերաբերող՝ վորոնք մեզ ներկայացնում են Հայաստանի տոհմական հասարակության իդեոլոգիական պատկերը։ Այս տեսակետից Սև ըլուրը Սև ջրի վրա (Զերխայի մոտ), ինչպես նաև Արմավիրի ըլուրը և նրա զրջակայքում և Սըր Դավիթը իրենց անացորդների կարևորությամբ — սիմբոլական փորմանքներով, ժայռագրություններով — հնագույն անձանոթ դրերով և այլն անպայման պետք և խաղացած լինեն կենարօնական դեր իրբի կուլտի վայրեր<sup>9</sup>):

Ի մի ամփոփելով ըուլոր տվյալները, մենք յեղբարակացնում ենք, վոր կուրդանաշինարարության ժամանակաշրջանը պետք և վերապրել յերկրորդ հազարամյակի վերջին (մեր թվ. առաջ), կամ առաջին հազարամյակի սկզբին։ բայց վոչ ոչ քան VII-րդ դարը մեր թվ. առ., քանի վոր այդ ժամանակ խաղական արշավանքների հետեւանքով առաջացած յերկարատե յերերուն քաղաքական կայությունը չեր կարող շանդրադանալ կուրդանաշինարարության վրա տեխնիկայի և գործադրությած դանդաղ պրիոնների տեսակետից, ինչպես ներկա զեղություն մենք այստեղ տեսնում ենք, վորը միանդամայն հանգիստ ու առանձով կյանքի դրոշմեն և կրում իր վրա։

ՀԱՅԱ - „Проблемы Истории докапиталистических обществ“, ГАИМК № 9 - 10, 1934 г. Л. М. էջ 165 - 8.

<sup>9)</sup> Աշխ. Քալանթար - Խալդեյին մի նոր սեպազիր որձանագրություն պահպատ Զանֆիդա դյուղում - էջ 17. (Որագիր Հ. Հն. Պ. Կոմիտասի № 4, 1930 թվ.)

A. Kalantar-Inscriptions d'Arménie en caractères inconnus, Revue Archéologique, 1929. p. 43 - 45.

## ՀՈՌՄԵՍԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՆԵԿՐՈՊՈԼԻԾ.

Դուրսաններից հետո, յերկը ուր գործ ժամանակի հերթականությամբ, նոռմեական ուղանի խոդակի նեկրոպոլն է, վորք հետ մենք ձանոթացանք վերեւում (եջ 16—18 և 36—43):

Մենք ահսանք, վոր փաստական բոլոր տվյալները միաւրիւան ապացուցում են, նախ և առաջ, առ ընդարձակ նեկրոպոլի հոռմեական եղոխային պատկանելը: Այդ տըլյաները նյութական կուլտուրայի այն մնացորդներն են, վորոնք մինչ այժմ կատարված աշխատանքներով հասել են մեր ձեսքը: Հիշենք դրանցից զիխավորները—

1. Համառոտակի նկարագրածո գամբարաններում ֆիկսացիոնի յենթարկված զերակշռող ժագման ձեռ (զիրքը—մեջքի վրա, ուղղությունը, զարդարանքների տեսակները, կճուճների բացակայությունը և այլն)\* հեթանոսական—քրիստոնեական անցման շրջանի սովորական տիպն եւ:

2. Դամբարաններում հայտնաբերված զարդարանքներն իրենց ծագումով՝ տեղական, ընդհանրապես արևելյան, թե արևմտյան, մանավանակ դրանցից գեմմաների խոշոր մասն իրենց տիպով և մոարիվներով, ապակե զարդարանքները, ապակե սրբակները, ֆիբուլան և այլն (տես նկ. 14—15, 16, Տախտ. VII—VIII)\* վոչ միայն ընդհանրապես համապատասխանում են այդ ժամանակաշրջանին, այլ մեծ մասսամբ իրենց թե տիպով և թե անորոշ ծագումով կարող են ձանաշշել հունա-հռոմեական—իրքն նմանողություն, կամ ուղղակի հռոմեական արտադրություն:

3. Վերջապես Անտառաթաղի մի գամբարանում զանված նոռմեական դրամք, լոր՝ թեկուղ շատ վաս պահպանված՝ ժամանակեր վիճակում, սակայն Ալ. Նիկ. Զող ը ա Փի (Լենինցիքաղ, Գետ. Սրմիտաժ) սիրալիք աջակցությամբ, նրա կողմից հմտորեն մաքրված ներկայումս և վորոշված՝ սուրերատ զինար և (պղնձե զրած արծաթմապատ, վորի արծաթն արդեն վեշնչացել ե)՝ հաղվագյուտ, պատկանում է Վեսպափանին կամ Տիտին—69 կամ 71 թվականի մեր թվ. (այս թվերի զրամմերը ըստ տիպի միորինակ են, բայց ավելի Տիտի

\* ) Ամբողջությամբ կհրատարակվին տռանձին՝ «ՀՀ» Վաղարշապատի պեղումների նյութերի հետ մրասին:

Համար և բնորոշ, ինչպես տալիս է Cohen—Monn. Imperiales, հ. I, էջ 371, և 43, նաև էջ 431, և 24),

4. Մեծ կարեռություն և ներկայացնում Հին Պատրիապատի առեղծվածի լուծման համար նախկին դյաւակերից վերեռում հիշած նույնական արձանագրությունը ես, վոր թեկուղ բացված և 1914-1915 թվերին, և ունեցած իր նախական հրատարակությունը<sup>\*</sup>), առկայն մնացած անուշազիր և չողագործված ըստ արժանվույն. (պահպատմ եր Եջմիածնի Հնագիտ. Թանգարանում, ներկայաւմս Յերևանում՝ կուլտուր—Պատմական Թանգարանում):

Այդ արձանագրությունը ընթերցում — ուսումնասիրությունն այժմ կատարված և ակադեմիկ Ս. Ա. Ժերելյանի կողմից, վոր և հրատարակում ենք ներկա աշխատությունն հետ միասին— «Հունարեն դամբանական» արձանագրությունը գրունվագրությունը. (ահեա Հայկերդամ I, էջ 75): Արձանագրությունն իր բովանդակությամբ դամբանականին և, զրված մի սալանման քարի վրա — կարմրավուն առաջիկ, վորոն ըստ ձևի առնչության կաղման եղերեղմանարձանի մասն Հեղինակն և հոռմայեցի զինվորական տրիբուն Ելիի Վալենա, վոր զրել և իր մահացած կնոջ և աղջկա հիշատակին ըստ հնագրական առանձնանարակությունների արձանագրությունը պատկանում և մեր թղ. Ա-րդ դարու յերկրորդ կիոնին, իսմ III-րդ դարու առաջին կիոնին Ինչպես ասացիր (էջ 12, 36-37, 41) արձանագրությունը դանօփել և Եջմիածնի Առուի շինության միջոցին, նրա յերկրորդ կամուրջի մասերը (Հոփիսիսինիյի և Զվարթնացի մեջ տեղում, մուտքորապես հավատար հնատվորության վրա նրանցից, Գեղգ. հան. քառ. 112), որը յեզիր և ուրիմն և ել. Վալենատի կնոջ ու աղջկա գամբրանը: Սա հին քաղաքի նեկրոպոլի տարածման ամենահսկավոր կետն և արելյան կողմից, վորքան մինչ այժմ հայտնի յէ մեղ. (ահեա Քարտոհազարամ. 11),

Այս արձանագրությունը ըստ հաշվի յերրորդն և, վոր մինչ որս պահպած և ոյս միջավայրում և պրված և հոռմայեցիների կողմից, մյուս յերկուոր լատիներին, վոչ զամ-

\*). М. Ростовцев — Новая греческая надпись из Эчмиадзина. Х. Восток, т. III, вып. III. էջ 223-8.

բառանային իրենց բովանդակությամբ, այլ չինարարական, ոտնօդիկեն վաղարշապատի մեջ և վերաբերում են հենց նրան, յերկրուուն ել պատկանուում են Արք զարի յերկրորդ կիսին—մեր թվ. 175 և 185 թվականներին։ Այդ արձանապրությունների ներքին կառը պարզ և միանգումայն։ առաջին յերկուսից արզեն հայոնի յեր մեզ, վոր Հին Վաղարշապատում ուրդ ժամանակ դառնվել և 15-րդ Ապալոնյան լեզիոնը։ այդ միննույնի լեզիոնի արիբուն և նաև մեր այս յերբորդ արձանուորության հեղինակ ել. վակենաբը։

Տեղի ընդհանուր հետախուզությոց մենք տեսանք, վոր նեկրոպոլի արևելյան և հարավ-արևելյան շրջապատը մինչև Զվարթնոց և կուրգանները — ոնապատային վայր և, առանց վարմե կուլտուրական հետքի. ուստի վոչ մի իրական հիմք չկա նեկրոպոլի քաղաքը — այսինքն Հին Վաղարշապատը — վորոներու այդ շրջանում և վոր նրա միակ հավանական ուեզը նեկրոպոլից արևմուտք և, ներկայիս Վաղարշապատի — Հոփիսիմեյի ուղղությամբ։ Այստեղ միայն կարող եր նա տեղափորված լինել, ըստ ամենայնի նույնանալով իր տեղակ այժմյան Վաղարշապատի նես։

Այլ յեղբակացության դժվար և հանգել պատմական Վաղարշապատի տեղի վերաբերմամբ, ի նկատի ունենալով նաև վերոհիշյալ յերկու լատիններեն արձանապրությունների գյուտը Եղմիածնի տաճարի շրջակայքում, վորի գտնված վայրը, անշուշտ, ունենալու եր կենտրոնական գիրք հին քաղաքի վերաբերմամբ, վորտեղ, իրըն իրենց զորանիստում, համայնքի զորավարները կառուցել են կարող չենք — ամբություն, հավանաբար միջնարերդ։ \*)

Այդ են հաստատում նաև մեր մատենապրտկան տվյալները — արքունի ապարանքը զնելով քաղաքամիջում, ուր և ըերդն եմիջնարերդը (Ազաթանգ. 178, 180, 192), նույն քաղաքամիջում, արքունի ապարանքի մոտ զնելով նաև կաթողիկեն — տաճարը (Ագ. 735-6); \*\*). Այդ միենույն աը-

\* М. Востовцев — Новые латинские надписи с юга России, надпись из Вагаршапата. Изв. Археол. Ком. 1909 г; вып. 33, стр. 5—8, 15.

\*\*) Այսպիսով մեզ համար պարզվում է, վոր Հին Վաղարշապատն ունեցել և բ գ, հականալով այդ միջն ա բ ե բ գ ի իմաստով, քանի վոր նա

վյալներով իմացվում և մռամբորապես և քաղաքի արևելյան-սահմանը, վոր մեզ ներկա գեղգում ավելի յի հետաքրքր-քրում. քաղաքի «Արեգ» (արևելյան) դանից մինչև Հոփոխ-մեյի գտնված վայրը բնորոշվում և բավականին տարածու-թյամբ դեպի հյուսիս-արևելյան կողմ (Ազաթանգեղոս, 192), այսինքն համարյա նույն պատկերն ինչ վոր այժմ կա: Այս դրությունը ճշտվում և նաև մատենագրերի մոտ հիշված «Վաղարշապատի պողոտայի» ուղղությամբ: առ քաղաքի կենտրոնից—քաղաքամիջից գալիս անցնում և «Արեգ գնուվ» և զնում դեպի Արտաշատ, նրա մոտ—նրա վրա յեն գնում ևմի փոքր բարձրադիր տեղում»—Հոփոխմեն և, ապա համե-Զվարթնոցը (Ազաթ. 192, Սերես լ.Գ): Սրանից պարզ յերե-վում և, վոր այդ հին պողոտան, գոնե իր այդ գլխամասում. ուղիղ համապատասխանում և ներկային Վաղարշապատ—Յերեան խճուղուն:

Իրական նոր տվյալները, զլխամբորապես գամբարանային-ուղնում են նմանապես վրոշելու—հայութի կյանքի տեխոլո-րյունը: Տիտ կայսեր գրամի ներկայությունը նեկրոպոլի վոչ-ծայրամասի գամբարանախմբում, ապացույց և, վոր վոչ ուշ քան 1 դարը մեր թվ. նա գոյություն ուներ իբրև ընդար-

դանվում և քաղաքամիջում և Այս մը Քամբարեզում և գանգում «արքունի ապարանք»: առ ունի առանձնացած դիրք, իր ներքին ուղիները, «փողոցը»: վոր տանում և (հանում և) «ը և զ ա մ ե ջ ո ւ թերզից զւու դաշուց մանում, ևն է քաղաքամիջու թաղաքն իր ներքին ջուրջանակի ունի ու ը ի ո ու, այդ պարզության մասերում ևն անդամության գաղաքի դիրքությունը: Հեշտու ևն հակառակ արնելյան (Արեգ գուռն) և հարուստին (շուռան հարավուց): կողմերում յեղածները հին քաղաքի հեղածու զլխամբը մասերը պատկերաց-վում են կոնց նույների զամանակությամբ, մեկը մեռահ մեջ՝ ապարանք (կենարունում)՝ միշտարերգ՝ քաղաք:

Ապարանը մռա, այսինքն միջնաբերդի ներքում, կառուցվում և էլ ու-թ ո զ ի կ և ն ։—Մը միա ձնի առմաքը: Հետևապես, Աղմանձնի տառապը ու պա-րիսպները իւնից ներկա տեղադրությամբ ուղղակի մասնացույց են անուա ոյն տեղը, ուր յերբեմն յեղի են Նիմ Վաղարշապատի քեմիքաբերդը յիշ քե ար-բանական ապարանը:

Այս տվյալները մեզ համար ունին խոշոր նշանակություն թե հին-քաղաքի տողորաֆիան մռամբորապես գոնե պատկերացնելու: և թե նյութական կուլտուրայի համապատասխան մնացորդները վճրաւեց զո-րաներւ առասկետէց:

ձակ բնակատեղիւ ժամանակի մյուս ծայրը բնորոշվում է Հոփիսիմինյին ավելի մոտ գտնված դամբարանների խմբով, ինչպես նաև Անաստաթաղի առանձին որինակներով, վորոնք ժամանացույց են անում հեթանոս-քրիստոնեական անցման բջնիւի վրա, ուստի և վերադրելի քրիստոնեության սկզբին՝ IV—V դարուն. այսպիսով ուրեմն այս տեվողությունն ուղիղ բնորոշելու և Արշակունիների ժամանակը:

Պատմական Վաղարշապատի նիմնաւմը, ըստ գրական աղբյուրների, բանասիրության կողմից վերագրվում է հռոմայցի զորավար Ստատի Պրիսկոսին 163 թվին, սակայն պարզ ե, վոր Պրիսկոս, թե նրա հետառք Մարտի Վերոս վագարչապատը վոչ թե հիմնել են, այլ անշուշտ Արտաշատի անկումից հետո, նրա փոխարեն, վոյություն ունեցող այդ քաղաքը դարձրել են Հայաստանի մայրաքաղաք—վերանայնելով նրան «Նոր քաղաք» կամ «Նորաքաղաք» — Կունկ Աճալ:

Միանդամայն արդարացի յե Խորենացին, վոր Վաղարշապատի գոյությունը շատ ավելի հետու անցյալի հետ և կապում, յերբ նա կոչվելիս ե յեղել տարրեր անուններով («Արտիմիկ քաղաք», «Վարդգեսի ավան», պ. Բ. գլ. 65), Անշուշտ խոչոր պետք ե լինի այդ քաղաքի շինարարության զործում հայոց Վաղարշ թագավորի խաղացած վերը, վորի անունով նա կոչվում է զլիսավորապես, սակայն նույնպես թյուրիմացություն և Վաղարշին համարել հիմնադիրը—ինչպես անում են ուսումնասիրողներից վոմանք—անկախ նրանից թե Վաղարշն ապրել և Արդ զարի սկզբում թե նրա վերջում, կարելի յե ընդունել ի հարկե, վոր Վաղարշն և նրան հողաք դարձնողը, այսինքն լեղած բնակածելին պարապողը, ինչպես հաղորդում ե Խորենացին՝ «Վաղարշ պատեաց պարսպաւ և հզոր պատուարաւ (հզոր աւանն Վարդգեսի) և անուանեաց Վաղարշապատ, որ և նոր քաղաք»: \*) Մենք առայժմ վոչ մի փաստական ավյալ չունենք հերքելու այս տեղեկությունը: \*\*)

\*) Մ. Խոր. Պատմ. Բ. գլ. 65.

\*\*) Այլ կարծիքի յե ը. Մանազյանը՝ վոր Խորենացու այս խոցերի վերաբերմամբ անում և հետեւյալ նկատողությունը „Предположение Ко-

Հին Վաղարշապատի նեկրոպոլը յեթև իրեն բովանդակուծ իրական տվյալներով հասարավորություն և առաջ վորոշելու քաղաքի կյանքի տեսողությունը —մինչև հինգ դար, ապա նա իրեն ընդարձակությամբ (1. 10. X 0. 80 կիլոմետր) և դամբարանների խիստ զատավորությամբ զաղափար և առվազ բնակչության բավականացած մեծ համակի մասին: Բայց այս կարեորն այն և, վոր այդ հոծ ազգաբնակչությունն ըստ յերեսոյթին չատ բազմատարրու բազմարդես պատկեր ուներ:

Այդ մասին զամբարանային հինգ տիպերը (գոնե վորոգան առաջժմ մեզ հայտնի լին) չատ բան են ասում: Տեսնել նրանց մեջ ժամանակագրական հետևողականություն՝ չի կարելի, քանի վոր իրենց բովանդակությամբ նրանք հերքում են այդ և, ընդհակառակը, ժամանակագրական վորուտարքերություն հայտնաբերում այս կամ այն միենայն տիպի տարրեր որինակների մեջ: Չի կարելի բացարձև այդ նաև սոցիալական շերտավորմամբ՝ առանձին տիպերը վերագրելով այդ ժամանակվա հասարակության տարրեր զամբարգերին, քանի վոր սոցիալական տարրերությունը ակընայտ և հենց յուրաքանչյուր տիպի բնադափառում, ուր առանձին որինակներ — հարուստ և ազքատ իրենց բովանդակությամբ — պերճախոս կերպով ի հայտ են րերում այդ տարրերությունը: Ամենայն հազանականությումը ուստի ներկայացված ենք տեսնում այն հանիքական և կրոնական միավորները, վորոնցից, ըստ յերեսոյթին, կողմանք եր այդ քաղաքի բնակչությունը:

рениского о постройке Вагаршем стены и вала основано, повидимому, не на исторических данных, а на неправильной интерпретации названия Вагаршапат". („О торговле и городах Армении“, 93): Առընդապես խոսքերը նման ինտերպրետացիան յետ համարում են անքնութեալի, քանի զար հարցը հայությունը չի կաշանում նրա մեջ թէ նորինացին հասկացել և թէ չեն հասկացել «ոդ առաջ» քաղաք, բնակություն) խոսքը իմաստը, այլ նու առիս և ավանը (այսինքն՝ առանց ոդ որոպի բնակատեղին) բաղակ դուռնիլու (այսինքն՝ պարագագ պատկեր, պատվարելու) նկարադրությունը, քաղաքաշնաբարության պրացեսը ձեշտ այնպիս, ինչպիս նու այդ անում է մյուս բոլոր նման զեղացերի վերաբերմամբ—Մծրին (Բ-բգ-36), Յերվանդաշատ (Բ-բգ-37), Վան (Ա. զերբ-16) և այլն, վարոնը նույնպես պարագագ են ու պատվարվում, թէ եկուղ և նրանց անվան կազմության մեջ չկա «ոդ առաջ» խոսքը:

Առ մասսաւկան արտահայտիչն և այն իրական գրության, ուր իրոք ունենալու յեր պատմական վաղարշապատը: Մենք զիս ևս ևս հնաբաժնություն չունենք մատնանշելու թե հասկապես վայր արդան այդունք ապրող շաբաթություններից վարին կարող եք պատկանել, սակայն պատմական և իրական բոլոր ավագաներն ի նկատի ունենալով, զոնք հաստատապես կարող ենք տսել, վոր այդունք ապրել են հայեր, բասերներ, հույներ, պարթեներ, հրեաներ, ասորիներ, անշառ կլինեյին ուրիշները ևս, հրեաների մասին հաղորդում և նորենացին և նրանց զաղթեցումն ու բնակեցումն այդունք վերագրում և Տիգրան Մեծին:

Պատմական վաղարշապատի այսպիսի միջազգային բնույթը և բառ ամենայնի բարդ հասարակական հարաբերությունները քաղաքական, կուլտուրական ու իդեոլոգիական հոգի վրա, մի կողմից պարթե—հոռմեական հակամարտության, իսկ մյուս կողմից արտաքին լայն հաղորդակցության՝ շփումների, ինչպես նաև քրիստոնեական—հեթանոսական ներքին պարքարի հետեանքով՝ ուժեղ արտահայտաված ենք տեսնում իրական սկյալներով: Այս տեսակերպ մանավանդ զարգարանքների բազմազանությունն ու նրանց շատերի ներմուծված լինելը՝ պարզ ապացույց են, վոր զոյսություն և ունեցել զարգացած վաճառականությունն մենուղ հեթանոսությունը հանդես և յեկել վոչ միորինակ և ուժեղ կերպով, այլ անկման շրջանի արտահայտությամբ:


Իրական ավագաները մեզ լավ ծանոթացնում են տեխնիկական արտադրության հարաբերությունների հետ, սակայն զեռ ևս զժվարանում ենք վոչ տեղական իրենց ծառալումով նյութերի ճիշտ սահմանորոշումը տալ, այսպես—ըստ այդ նյութերի հոռմեացոց գերը վոչ միայն քաղաքական, այլ նաև կուլտուրական ներքին կյանքում, իր հունահռոմեական բռվանդակությամբ, շատ ավելի յէ նկատվում, քան այդ կարող ենք պատկերացնել դրական ազբյուրների հիման վրա: Բնակակառակը, պարթեականը, վոր պետք և շատ ավելի լիներ մանավանդ ներքին կյանքում—կենցաղում՝ առանձնապես աչքի չի ընկնում: այս բացատրվում և զուցեավելի այն հանգամանքով, վոր նա անմիջապես չի յեն-

թարկվում մեր ճանաչմանը. մենք վատ դիտենք պարթեականը, նա անվորու մեծություն և ընդհանրապես դիտության մեջ. բայց նա կա անշուշտ, և մեղ հարկավոր և պարզել, աշխատել լուծել պարթեական պրոբլեմը. Առ այժմ՝ մեր նյութերի մեջ, իրքե պարթեական, կարող ենք մատնանիշ անել կավե թրծած դադաղները, այն հիմունքով, վոր այդ տիպն իր անալոգիան ունի նաև բուն պարթեական միջավայրում—Միջազետքում, իրանում, սակայն այդ տեղերումն ել յեղած որինակների անպայման պարթեական լինելը վերջնականապես հաստատվելու խնդիր և դեռ ևս (նկ. № 12). Դժբախտարար հենց այս տիպի դամբարաններում մեղ մոտ չեն գտնվում իրեր, սակայն մյուս դամբարաններում գտնված իրական ավյաշներից պարբեկան—սաստմական են, անպայման, զեմմաներից նրանք, վորոնք ունեն սապատավոր յեղի նկար (Տախտ. VII—VIII. նկ. 4). զուցե և բրոնզե մատանին պալմետի ծագկենկարով, ակի տեղում (Տախտ. VII. նկ. 2).

Վորքան ել մյուսներից գեղար լինի բոլորսին առանձնացնել, սակայն ավելի շուտ ևեղական—հայկական և՛ համարեկու այն գեմմաները, վորոնք ունեն այժի նկար բրոնզի կնիքի վրա (VII. նկ. 1). քառամին նկար (?) կնիքի վրա՝ շինգած լեռնային խրուտալից (VII. նկ. 3). ձեռանուման նկար սերդութիւնի մատանու վրա (VII. նկ. 5). ինչպես նաև խաղողի վողկույզի նմանությամբ արծաթի զինուերը (VII. նկ. 7, 8).—ի նկատի ունենալով սրանց մոտիվների անհամեմատ ավելի հին ծագումը Հայաստանում, զուցե պետք և ամելացնել նաև հուլունքների վորոշ տեսակներ և ազատից շինած մատանիները (Տախտ. VIII. նկ. 11).

Նյութերի խոշոր մասն, ինչպես ասացի վերեսում, նույնական կուլտուրայի հետ և կապվում. այսպես, նկ. 9 և 10. գեմմաները արծաթ մատանիների ակների վրա, վոր հայանարար Աֆինա-Պալատան և սապավարառով և վահանով (VII. նկ. 9). և Դեմետրան ցորենի հասկը ձեռքին (VII. նկ. 10. նույնը տես մեծագիր նկ. 16), առակե սրբակները, վոր հոտավետ յուղերի Փլակոններ են (VIII. նկ. 12).


Հնդկական պատճենների մասին գարզաբանքներ - հուլունքները, բրոնզե գիրտան (VII-6) և այլն:



Նկ. 14. Տարբեթ. VII. Զարդարանքներ Հնդկականից շրջանի դամբարաններից:  
Նկ. 14. 1, 2, 3, 4—ցամք. VII, 5—ցամք. IX, 6—ց. X, 7—ց. III, 8, 9 & 10—կորանեմնեն  
ցամքը բարձրական:

Այսպիսով հանդում ենք այն յեղբակացության, վոր սուսազնական պեղումներով պարզորոշված ներկայութեամբ («մեռնածների քաղաքը») պատկանում է պատմական Վաղարշապատին: Քաղաքը տարածվել է նեղրոպողի արևմտյան կողմում և այսպիսով նա բա և նոյնի նույնանում է ներկայիս Վաղարշապատի նես. Հին քաղաքը, վորի կյանքը ըստ իրական-տվյալների, չափվում է առնվազն I-V դարերով, այսինքն ուղիղ Արշակունիների ժամանակաշրջանով, հիմն-

Տարածություն ՎԻԼ. ( Կե. 15 ) Հայոց ալպանքներ կարծիքություններ ու լուսաբանություններ -





